



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

840

11261

101

Handwritten Armenian text, likely a letter or document fragment.

ԽՈՐԷՆ ԲԱՆ ՄԻՐՉԱՐԵԳԵԱՆՆԵ

№ 103

ՄԱՐԻ ՄԿՅՐԵՆԵԻ ԼԵԳԱՏԻՍ

ԱՅՐԲԵՆԱՐԱՆ

Ե Ի 149

Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն

Կարդալ և գրել

Ազդեին տարերից ամենաճշտ
և Կնդանա՞ծը լեզուն է:

11261



Text written on a small rectangular slip of paper, possibly a note or correction.

Երկրորդ տիպ.

Ձեռքը եւ յաւելուածով եւ գրուածի օրինակներով.

Բ Ա Գ Ո Ւ

ՄԱՐԿԱՄԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆՈՒՄԸ

1876.

Дозволено Ценурою. Тифлисъ 7-го Января 18

Handwritten: 1110
Handwritten: 103
Handwritten: 2862
Handwritten: 1645
Circular stamp: 60 L
Text: ԵՐԱՅԱԳԵՏ ՍՐՏՈՎ ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

Մեծապատիւ Գրիգոր Յովհաննէսեան

ԴԻԼՏԱՐԵԱՆՅԻՆ

ԲԱԴՈՒԱՅ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՆՓՈՓՈՒ ԱՆԴԱՄԻՆ

Որի նիւթաւոր օժանդակութեամբը

1,080 Է ՏԵՍՆՈՒՄ ԱՅՍ ԳԱՍԱԳԻՐԻԸ:



Չե՛ղ եմ ատում, ձե՛ղ, Հայոց նորա-
 չա՛ս երիտասարդներ, ձեր անունին մեռնեմ,
 ձեր արեին զուրբան, տասը լեզու սովրեցէք,
 ձեր լեզուն, ձեր հաւատը զայի՛մ բռնեցէք:
 Մէկ դարտակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկա-
 րենայ սովրել: Բաս չէ՞ք ուղել, որ դուք
 էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն թո-
 դաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգ-
 մանեն, ձեր անունը յաւիտեանս յաւիտե-
 նից մնայ անմահ:

վեր+ Հայաստանի:

Թէ ինչպէս պէտք է ուսուցանել, աւելորդ չենք համարում դնել այս
 տեղ մի քանի կանոններ. բայց խորհուրդ կտայինք մեր Հայոց ամեն
 մի պատրաստական դասատուների ուսուցիչներին ձեռք բերել Ղազա-
 րոս Աղայեանցի աշխատասիրած ,,Ծնօդաց եւ ուսուցչաց համար Ռուս-
 մըն Մայրենի լեզուի“ ձեռնարկը, որ կարող է ուսուցչի համար մտաւոր
 ընդարձակ ճանապարհ բանալ իւր գործը արդիւնաւորելու:

Տառերի հնչիւնը—ա տառը պէտքէ հնչել Ռուսաց ա տառի պէս
 եւ ոչ այիբ. բ տառը Բը, եւ ո՛չ բէն. գ, Գը. դ Դը. ո՛չ գիմ եւ ո՛չ
 դա. ե, Ռուսաց Ե տառի պէս Ե. ո՛չ Թէ եչ. զ Զը. Թ, Թը. ժ, Ժը.
 ի Ռուսաց ռ տառի պէս ի եւ ո՛չ ինի. ւ ւը. լւ Լը. ժ Ժը. կ Կը.
 հ Կը. ծ Ծը. ղ Զը. ճ Ծը. մ Ծը. յ Եը. կամ Ե. ն Զը. շ Զը. ո Զը.
 չ Զը. պ Կը. ջ Զը. ո Կը. ս Կը. վ Զը. տ Կը. ր Կը. ց Եը.
 լ յի. ն. փ Կը. ք Կը. եւ Լ օ. ֆ Զը:

Է, Գ, Զ եւ Դ տառերը պէտք է փոքր ինչ թանձր հնչել. իսկ
 Կ, Զ եւ Կ տառերը նուրբ. որովհետեւ մանուկը ինչպէս սովորում
 տառերի հնչիւնը, այնպէս գրում է եւ կարդում հետեւելով իւր սովորած
 հնչմանին:

— տառը մէկ բառի միջում ձայնաւոր տառից յետոյ կամ բառի
 վերջում իրրեւ լ է հնչվում, ինչպէս բա—ական, զօրա—որ, համբա—) եւ
 այլն:

Երկրարբառները—որոնք են Ե՛ւ, ո՛ւ, Ե՛ւ, Ե՛ւ, ո՛յ, ա՛յ, չպէտ-
 քէ առանձին առանձին պարզ տառեր հնչել:

Ե— երկրարբառը երբ որ ընկնումէ երկու բաղաձայն տառի մէջ, հնչ-
 վումէ Ռուսաց Ե իւր տառի պէս. օրինակ հէ—ր. բէ—ր մէ—ն. զօրու—
 Թէ—ն եւ այլն: Իսկ երբ որ ընկնումէ մէկ բառի վերջ, հնչվումէ իրրեւ
 Ե՛ւ զորօրինակ բառէ— հառէ— հառէ— եւ այլն:

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

1.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի
լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն
շ	ռ	չ	պ	ղ	ռ	ս	վ	տ	ր	ց
ւ	փ	ք	և	օ	ֆ:					

2.

Չայնաւոր տառեր:

ա' ե' է' ը' թ' ո' օ:

ա	պ	բ	փ	Փ	դ	կ	ք	դ	թ	տ
ե	է	ո	օ	վ	ւ	ն	ղ	խ	ղ	ժ
ի	յ	հ	ւ	ը	ճ	ղ	չ	ծ	ձ	ս
ց										
շ	ռ	մ	ն	բ:						
ա'յ	ո'յ	ո'ւ	ե'ա	է'յ	է'օ	ի'ւ	ա'ւ			

ԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ:

Handwritten notes in the left margin, including the word 'Չայնաւոր' (Chinese) and other illegible characters.



Հա ՀախաՀր
Վի Հաւ Բա

Տրեշտակ

3.

ա կ է շ Տ ց Լ ո օ մ ղ փ
ամ. կա. հա. առ. մի. նա. աղ. ափ. եղ.
եկ. էշ. էծ. էր. օղ. օր. օձ. օդ.

հաց, լաց, շամ, մաշ, համ, մահ, շամ,
շալ, լաշ, մօշ, կալ, կահ, կամ:

4.

ե ս է ր ծ տ գ դ ու.

ես, սեր, ծեր, տեր, մեր, դու, նա, ոչ, ոք,
սա, դա, տեղ, գետ, նետ, տես, մի, կես,
սուր, սուր, լուծ, մատ, մաս, տար, չիր,
չոր, ծառ, վառ, փառ, ծուռ, զուր, հերթ,
բերդ:



ճի

5.

ու այ ոյ ջ թ փ բ վ ի շ տ.
հօր, մօր, հոր, փոր, փուշ, փութ, ութ,
թութ, թուղ, շուտ, թեփ, փութ, թուփ,
հայր, մայր, քար, սար, քոյր, ծոյլ, ջուր,
կոյր, լուր, լոյս, բոյս, վարդ, զարդ, շուն,
թափ, քափ, չափ, սարք, կարգ, վարք,
կառք, վիշտ, միշտ, ճիշտ, տունկ, սունկ,
հով, բով, քով:



կով

6.

թ ի ո ս ա հ ե տ փ թ օ.
թան, թառ, խան, խար, խափ, խամ, բան.

պաս, թաս, ֆաս, խաս, մաս, հաս, լաս,
 պէս, ծէս, տես, կէս, պան, բան, թան,
 ման, խան, շան, սան, դան, սալ, սափ,
 սահ, սաթ, սեպ, թեփ, կեփ, սար, սազ,
 փակ, թազ, թափ, դիժ, դիծ, թիզ, մեզ,
 հեզ, տաք դար, տազ, փունջ, մունջ,
 վանք, հանք, ոտ, մօտ, հօտ, հոտ, տանձ,
 դանձ, ճանձ, սանձ:



ձուկն

Յ.

ու ի ր լ խ օ ձ այ է ոյ կ վ.
 լուծ, խուց, խոց, ծոց, խոր, հոր, լոր, շոր
 մօր, հօր, հուր, սուր, թուր, տուր, խուլ,
 ձոր, ձօն, ծով, կով, հով, օդ, օր, օծ, օձ,
 ձայն, հայ, վայ, այր, մայր, այս, այդ,
 կոյր, գոյն, թոյն, տուն, խաչ, խաշ, խէժ,
 թէժ, դէզ, մուկն, ձուկն:



Տ.

այ ն ր ո դ թ ժ ի ս.
 այն, այլ, ամ, արդ, այդ, խակ, խմ, մի,
 միա, մեր, ձեր, ձեզ, ինձ, քեզ, հեզ, հազ,
 մազ, վազ, խազ, խաչ, դէս, դէն, յոյս,
 խոյս, լոյս, բոյս, լուռ, մունջ, թուկ, թոք,
 թեզ, ծունկ, ծունկը, խուրձ, խուրձը, փայտ,
 փայտը, մատ, մատը:



Ծ.

զ կ է ու մ հ ն տ ջ.
 զիր, կիր, զէտ, զետ կէտ, կէս, միս, սէգ,
 տէգ, տիկ, ում, հում, մոմ, քուն, հուն,

տուն, լուր, հուր, ջուր, սուր, սազ, բաղ,
պատ, տատ, տար, տան, տալ, դատ, դաս,
հաս, տան, մէջ, մեծ, մէկ, ճար, ճաշ:

10.

ս դ ն այ հ փ գ կ

սա. դա. նա. այս. այդ. այն. սոյն. դոյն.
նոյն. իմ. քո. մեր. ձեր. մեզ. ձեզ. կար.
լար. քար. մար. օղ. քօղ. օր. կէսօր. կեղ.
դեղ. կաղ. մաղ. վաղ. գող. գող. հող.
փող. բեղ. սեխ. ծեղ. շոր. շող. շոգ. փոկ.
թոկ. թոք. թոռ:



աղաւնի

11.

և իւ ու ա խ թ ց ք

արև. տերև. անձրև. թև. տաթև. սրաթև.
խոփ. խուփ. խօսք. խուլ. ախ. ախտ.
բախտ. վախ. ձէթ. փետ. ձախ. քաղ. ձեռք.

իւր. իւղ. գիւղ. թիւ. լիւ. խօտիւ. հաղիւ.
հաշիւ. բարև. արև. անձրև. մինչև. արօտ.
կարօտ. ջրօտ. ցեխօտ. քարօտ. սար. սարօտ.
լեռնօտ. փոշօտ. թողօտ. քամօտ. բոր. բորօտ.



12.

իւ (1) դ ք ոյ այ շ ի ձ պ

հիւր. բիւր. իւր. բանիւ. քարիւ. փայտիւ.
ձիւթ. ձիւն. իւղ. սուրբ. յոյս. սոյն. դոյն.
նոյն. յոյն. հիւթ. քիւթ. թուրք. քայլ.
թուղթ. սայլ. բութ. բուրթ. քիւրդ. թոյն.

(1) հասկացնել աշակերտին իւ երկրաբառի կանոնը. տե՛ս Յարմ-
ջարանի մէջ:

բոյն. հայ. վայ. վաշ. պաս. սուգ. մութ.
փայտ. ինձ. քեզ. մեզ. ձեզ. ուզտ. կոշտ.
գորգ. հորթ. նուռն. կուռն. դուռն:



13.

պ գ ծ ղ ա փ ք ճ աւ իւ հ ժ.

պտուղ, ծաղիկ, փոքր, փոքրիկ, քաղաք,
փառք, պատիժ, պատիւ, ժառանգ, ծառ,
ծառեր, քար, քարեր, հաւ, հաւիկ, հաւեր,
մարդ, մարդիկ, փայտատ, փայտ, քար, քար-
հատ, քաղ, քաղ հան, սանձ, թամբ, ախոռ,
չուան, խոտ, ձիւն, բաժին, արմատ, սորա,
նորա, ատամ, ամիս, գլխարկ մարդ:



գլխարկ

14.

ես հայր ունիմ, դու հայր ունիս, նա հայր

ունի, իմ հայրը, քո հայրը, նորա մայրը, նա
իմ մայրն է, դա քո հայրն է, սա իմ քոյրն
է, ես քոյր ունիմ, դու քոյր ունիս, դա
քոյր ունի, իմ քոյրը մի ծառ ունի, նա
լաւ ծառ է, իմ ծառը պտուղ ունի, նորա
պտուղը քաղցր է, իմ ընկերը շորհք ու-
նի, նա լաւ երգում է, երգը լաւ բան է,
ինձ համար նա քաղցր է:




շուն

15.

բ գ ղ ժ խ կ մ ք վ չ բ.

գազան, գաւաթ, գոմէշ, տաւար, կանոն,
քանոն, մատիտ, գաղար, բարակ, կամար,
մակար, զրիչ, զաւակ, սիրուն, նախշուն, ազի:
մի գազան, երկու գազան, մենք մի գա-
զան ունինք, դուք քանի՞ գազան ունիք,
մեր գազանը խիստ գաղան է, ձեր շունն էլ

խիտ զազան է, իմ մատիտը լաւ է, քո
մատիտը սուր է, իմը կարմիր է:



Գազանը ինչպիսի՜ կենդանի է. (մտակեր): Ասացէք մի քանի գազան-
ների անուններ: Շանը ինչո՞ւ են պահում մարդիկ:



բազկաթոռ

16.

Իմ եղբայրը շատ մատիտ ունի, զեղին,
կարմիր, կանաչ, սև, սպիտակ և կապոյտ,
նա նորանցով նկարում է զանազան պատ-
կերներ, և գրում է նախշուն նախշուն գրեր:

մենք ունինք երկու գոմէշ, գոմէշը լաւ
կենդանի է, գոմէշով զետիներ վարում են,
լծում են նորանց սայլում, կրում են ան-
տառից փայտ և տանում քաղաք բեռներ
և շատ վաճառելի բաներ:



Գոմէշը ինչպիսի՜ կենդանի է. պատմեցէ՛ք թէ ինչի՜ են պէտք
զալիս նորա:



հրեշտակ

17.

ջանաւոր տառեր:

Ա՛ Ե՛ Է՛ Ը՛ Դ՛ Ո՛ Օ՛

ճարկատառեր:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
Դ	Ս	Վ	Տ	Բ	Յ	Ի	Փ	Գ

Օ Յ:



Գլխատառեր:

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ
 Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո
 Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ Ք
 Օ Ֆ:

Ա Գ Կ Դ Տ Թ Բ Պ Փ Ֆ Ռ Բ
 Ս Յ Յ Հ Ն Շ Ո Վ Ի Ք Ե Է Ի
 Օ Ձ Ժ Խ Ղ Լ Ծ Ձ Ճ Ձ Ձ Մ ԵԻ:

ԱՅ ՈՅ ՈՒ ԻՒ ԵՍ ԵՕ ԷՅ:

18.

Նուր դիր:

ա բ գ դ ե շ է ը Թ ժ ի Լ է
 զ հ և յ շ ճ Տ յ չ Ղ " Ղ ղ
 Ջ " " լ ր ց - զ ք Լ օ Ֆ:

Ձայնաւոր տառեր,

ա՛ Է՛ Է՛ ք՛ Թ՛ ո՛ օ՛

Բաղաձայն տառեր

բ գ դ ղ Թ ժ Խ ծ Կ Տ Ճ Ղ
 Ճ Ծ յ Ն Ղ Ն պ Ջ Ռ Ս Վ Ս Ր
 ց փ ք Ք:

19.

Հայկ, Արամ, Բարսեղ, Գեորգ, Դաւիթ,
 Էնօք, Զորաբաբէլ, Էմմանուէլ, Թորոս,
 Լևոն, Խոսրով, Կարապետ, Համազասպ,
 Ղևոնդ, Ճանիկ, Մարկոս, Յակոբ, Նու-
 արդ, Շուշան, Ոսկան, Չամիչ, Պապ,
 Զուանչիք, Ռուբէն, Սաճակ, Վարդան,
 Տիգրան, Արայ, Արսէն, Արշակ, Խորէն:

20.

ԻՄ ՀԱՅՐԸ ԱԻՆԻ ԿՍԻՐԷ ԻՆՁ, ԵՅԷ ԼԱԻ ԿՍՐԳԱՄ ԵՒ
 ԻՆԼՕՔ ԼԻՆԻՄ. ԻՆԼՕՔԻՆ ԱՄԵՆ ՄԱՐԴ ՍԻՐՈՒՄ Է:

Կան այնպիսի աշակերտներ, որոնք ասում են «Այսօր ին-
 ղնիք, վաղը դասներս կսովորենիք», Բայց կան և այնպիսի
 աշակերտներ, որոնք ասում են «վաղը կհասցանիք, իսկ այսօր
 դասներս սովորենիք»:

Ինչպիսի աշակերտները լաւ կսովորեն իրանց դասերը:





21.

Երբ որ ես ուսումնարանից գնումեմ
տուն, իմ մայրը ինձանից հարցանումէ իմ
սովորած դասերը, երբ որ ես լաւ եմ պա-
տասխանում, ինձ սիրումէ և գրկում. սի-
րումէ նոյնպէս և իմ միւս քոյրերիս և
եղբայրներիս և ասում, թէ լաւ կարդալ
և գրել սովորեցէք, որ լաւ մարդ դառնաք:

Իմ մայրը մի մատանի ունի, նորա ակն
լաւ ակն է, մէկն էլ ես ունիմ, նորա ակն
ալմաստ է: Մեր պարտիզում շատ ծաղիկ-
ներ կան. կուզե՞ս ասեմ նորանց անուն-
ները.—մանուշակ, ռեհան, զամբաղ, միխակ,
նարկիղ, գեղին վարդ, կարմիր վարդ, սպի-
տակ վարդ, յասմիկ, (եսաման) յափրուկ
(րեզետա) կակաչ, սուսան, շուշան: Դուք էլ
պարտեզ և ծաղիկներ ունի՞ք:

Կան մեր պարտիզում բուսած և զանա-
զան կանաչներ—անանուխ (նահնայ), գինձ
(համեմ, քիչնինջ), կոտեմ, պետրուկայ,
քավար, թարխուն, սամիթ (շեփեթ): Մեր
հարեանի պարտիզումն էլ կան շատ պղտ-
դատու ծառեր, թթենի, խնձորենի, տան-
ձենի, կեռասենի, նռնենի, յունապենի, շի-
րենի, շագանակենի, որոնք տալիս են թուփ,
խնձոր, տանձ, կեռաս, նուռն, յունապ, շոր
և շագանակ (շամբալուտ):



22.

Ինձ ունիմ շատ գրիչ, երկաթի էլ թևի
էլ, կուզե՞ս քեզ էլ տամ, եթէ չունիս:
Ես գրիչս ուղիղ եմ բռնում, մատերս էլ
ուղիղ եմ պահում, գիր գրելու ժամանակ
գլուխս էլ բարձր և ուղիղ: Եթէ գլուխս
ցած պահեմ, վատ կսովորիմ, աչքերիս էլ
փնաս կլինի, ասում է ինձ վարժապետս,
թէ դու կլինիս կարճատես:

Նոյնպէս էլ դասերս սովորելու և գիրք կարդալու ժամանակ միշտ գիրքը հեռիեմ պահում աչքերիցս: Այս ամեն բաները ինձ սովորեցնում է իմ վարժապետը. ես էլ սովորումեմ:

Ինչպէս պետք է բռնել գրիչը. եւ ինչպէս կարդալ գիրքը: Ով կարող է լինիլ կարճատես: Ասացէ՛ք՝ մի քանի ծաղիկների, կանաչների եւ պտուղների անուններ:

23.

Իմ վարժապետը ինձ ասումէ շատ անգամ, թէ պէտքէ գիրքը պահել մաքուր, որ կարդալուց յետոյ էլ հարկաւոր լինի ուրիշին: Ա մօթէ նորա համար, որ գիրքը լաւ չէ պահում: Ես իմ գիրքը, տետրակս, գրիչս, մատիտս և թուղթս լաւ եմ պահում. թղթիս վերայ էլ թանաք չեմ թափում, նոյնպէս էլ շորերիս վերայ, որ չփուշանան: Եթէ մատերս թանաքոտ է լինում, շորերիս չեմ քսում, որ չկեղտոտվին շորերս:

1926/1

Մայրի՛կ, ես լաւ գիտեմ իմ դասը, Արշակն էլ լաւ գիտէ, միայն գիրքը լաւ չէ պահում: Արշակը իրա մատիտը ինձ բաշխեց, ես էլ իմը նորան տուի. երկուսն էլ լաւ մատիտ են:

Իմ մայրը ինձ բաշխեց մի լաւ գիրք, ես պէտք է նորան լաւ կարդամ և պատմեմ միտքը մօրս: Գրքի անունն է Որբ Մատիլտայ: Եթէ նորա միտքը լաւ պատմեմ մօրս, մայրս մէկ ուրիշն էլ կտայ. նրան էլ կկարդամ, շատ գիրք կարդալով շատ բան կհասկանայ մարդ, ասումէ իմ վարժապետը:



24.

Ինձ ունիմ երեք եղբայր և մի քոյր, քրոջս անունն է Վարդուհի, եղբարցս

անունները-Արշակ, Արսէն, Տիգրան: Տիգրանը շատ վառված է խաղ անում, այնպէս որ, խաղալու ժամանակ գտակը գրկսիցն է ընկնում:

Մեր մայրը մեզ միշտ ասումէ, որ Տիգրանը խաղանք, շատ վառված խաղանք, որ չքրտնենք և չմրտնենք, ասում է թէ, քրտնած մարդուն եթէ ցուրտ կպչի, կհիւանդանայ: Խաղալու ժամանակ ես էլ պէտքէ հանդարտ խաղամ, պինդ չվզեմ, որ վեր չընկնիմ: Փողոցներում խաղալը շատ ամօթէ, նոյնպէս բարձր խօսելը, խօսելու ժամանակ, ասում է հայրս, պէտքէ զգուշ լինիլ, որ վատ խօսք գուրս չկայ բերանից:



Ինչպէս պէտքէ պահել գիրքը եւ շորերը: Ինչպէս պէտքէ խաղալ եւ ինչպիսի տեղում: Ինչ են ասում խաղալու համար հայրը մայրը եւ վարժապետը նոյնպէս խօսելու համար:

Ես ինչ որ կարդումեմ, այն ևս գրումեմ, որ միասին սովորիմ կարդալը և գրելը: Ես պէտքէ կարդացածիս միտքը հասկանամ, ինչ որ չեմ հասկանում, հարցնումեմ վարժապետից կամ մէկ իմացող աշակերտից:

Նոյնպէս էլ գրելու ժամանակ պէտքէ աշխատեմ ուղիղ գրել տողերը և անսխալ տառերը. տառերի զլուխներն էլ վերջերն էլ միմիանց հետ հաւասար: Եթէ սխալ գրեմ, սխալ էլ կսովորիմ:

Իմ քոյրը գնաց մեր բարեկամի տուն. գնա՛ Սրշակին ասա՛, որ գայ միասին գրնանք մեր բարեկամի տուն:

Գու էլ կգա՞մ միասին գնանք մեր տուն: Մեր բարեկամն էլ երբեմն գալիս է մեր տուն հօրս հետ. ես նորա համար երգումեմ և կարդում իմ դասը. սիրտս ուրախանումէ, երբ լաւ եմ իմանում, բայց սիրտս ախարումէ, երբ չեմ կարողանում երգել,

կարդալ և գրել, և ես ամաչումեմ այդ ժամանակ:

Ո՛վ է ամաչում: Ո՛վ է սիրում երգել, կարդալ և գրել: Ե՛րբ է տխրում աշակերտը:

26.

Մէկ շաբաթը բաղկանում է եօթն օրից:

Առաջին օրը՝ միաշաբաթի, այժմ ասումենք կիրակի:

Երկրորդը՝ երկուշաբթի:

Երրորդը՝ երեքշաբթի:

Չորրորդը՝ Չորեքշաբթի:

Հինգերորդը՝ Հինգշաբթի:

Վեցերորդը՝ Ուրբաթ:

Եօթներորդը՝ Շաբաթ:

Ամեն քրիստոնեաների կիրակին Միաշաբաթն է:

Հրեաների կիրակին Շաբաթն է:

Տաճիկների կիրակին Ուրբաթն է:

Քրիստոնեայք ինչու են միաշաբաթի օրը պահում կիրակի և ո՛չ շաբաթ օրը:

Գրեցէք օրերի անունները:



27.

Չորս շաբաթը այսինքն երեսուն կամ երեսուն և մէկ օրն մի ամիս է:

Տասներկու ամիսն մի տարի է:

Տարին երեք հարիւր վաթսուն և հինգ կամ վաթսուն և վեց օր է:

Տարին յիսուն երկու շաբաթ է:

Երեք տարի անցած՝ չորրորդ տարին նահանջ է:

Նահանջ տարին երեք հարիւր վաթսուն և վեց օր է:

Նահանջ տարում փետրվար ամիսը քսան և ինն օր է:

Օր ու զիշեր քսան և չորս ժամ է:

Ամեն մի ժամը վաթսուն րոպէ է:

Ս. ամեն մի րոպէն վաթսուն վայրկեան է:

Ամենակարճ ժամանակը վայրկեանն է, որ մի օրը թարթափելու ժամանակ է:

Տարին քանի ամիս ունի, քանի օր, քանի շաբաթ, երբ է նահանջ տարին. նահանջ տարին փետրվար, ամիսը քանի օր է. օր ու զիշեր քանի ժամ է, ժամը քանի րոպէ է, րոպէն քանի վայրկեան է, ամենակարճ ժամանակը որն է:

28.

Արշա՛կ, ես առանց զիր զիտեմ՝ ամիսների անունները. դու էլ զիտե՛ս, — զիտեմ, զէ ասա՛ տեսնեմ:

1,	Յունվար.	7.	Յուլիս.
2,	Փետրվար.	8.	Օգոստոս.
3,	Մարտ.	9,	Սեպտեմբեր.
4,	Ապրիլ.	10,	Հոկտեմբեր.
5.	Մայիս.	11.	Նոյեմբեր.
6.	Յունիս.	12.	Դեկտեմբեր.

Սովորեցէք զորանց բերան ասել (առանց զիր): Գրեցէք ամիսների անունները:

29.

Ամեն մարդ շաբաթի վեց օրը աշխատում է գործով, և օթներրորդ օրը հանգստանում է գործից. այդ օրը աղօթքով և բարի գործով է պարապում:

Աշակերտները այդ օրը, որ կիրակի է, ազատ են լինում դասից, ուսումնարանից: Այդ օրը զնուվեն եկեղեցի աղօթք անելու, Աստուծոյն փառք տալու: Սկեղեցի մտնելուս ես երեսիս խաչակիցում եմ, Կիսանուն Հօր և

Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ ասելով: Ասումեմ և այս աղօթքը, Կիսանուն Քո սուրբ և երկիրպազուծիւն կրտամ Քեզ Քո սուրբ Տաճարի մէջ Քո սուրբ երկիւղովը:

Ես եկեղեցումը ամօթով և շատ կարգին եմ կանգնում տեղս. զէս ու զէն մտիկ չեմ անում. բնկերներիս հետ չեմ խօսում. միտքս աղօթքների վերայ եմ պահում և ահանջ դնում, թէ ինչպէս են երգում քահանայքը և տիրացուները:

Շարաքի քանի օրն են պարապվում մարդիկ գործով: Եօթն երրորդ օրին ինչ ենք ասում: Այն օրը ինչով են պարապվում մարդիկ: Եկեղեցին մտնելուս ինչ էք անում եւ ինչ աղօթք էք ասում:



30.

Չորս հազար տարի յառաջ մենք մի պապ ենք ունեցել Հայկ անունով. նա քաջ մարդ է եղել. նա սիրել է Աստուծոյն և իւր ազգին. մեզ որ Հայ են ասում, նորա անունովն են ասում:

Մեզ ուրիշ ազգերը Արմեանի կամ Արմեանին են ասում մեր Հայկ պապի թուռան թոռնի անունով, որին ասում էին Արամ: Այս Արամը Հայկի պէս քաջ և ազգասէր մարդ էր. նա շատ էր սիրում իրա ազգին. նորա անունը դուրս էր եկել ամեն տեղ, ամեններն էլ գովումէին նորան:

Կեղ ում անունովն են Հայ ասում: Ուրիշ ազգերը մեզ ինչ են ասում:



աստղ

31.

Մեր երկրի անունը Հայաստան է. բաց ՚ի մեր երկրից կան և ուրիշ շատ երկիրներ.— Ռուսաստան, Յունաստան, Վրաստան, Տաճկաստան, Պարսկաստան, և այլն:

Մեր երկրում կան շատ սարեր. ամենից բարձր սարն Արարատն է, որի գլխին հանգստացել է, Նոյի տապանը (նաւը) ջրհեղեղի ժամանակ: Արարատ սարի գլխից միշտ անպակաս է լինում ձիւներ:

Կան շատ գետեր էլ: Ես գիտեմ մեր երկրի գետերի անունները,— Եփրատ, Տիգրիս, Երասխ, (Արաքս կամ Արազ). Ճորոխ կամ Փխտն, Կուր, Հրազդան (Չանգի). Ախուրեան, այժմ սորան Արփաչայ են ասում (Գարեգետ): Վանայ կամ Աղթամարայ և Սևանայ կամ Գեղամայ ծովակներն էլ մեր երկրումն են:

Մեր երկրի անունը ինչ է: Գիտէր ուրիշ երկիրների անուններ եւս. սարերի. գետերի. ծաղիկների:

32.

Ախուրեան գետի վերայ Հայերը ունեցել են մի մեծ երևելի քաղաք՝ Անի անունով. այդ Անին հիմա աւերակ է. դա մի ժամանակ մեր Հայոց թագաւորների մայրա-

քաղաքն էր. որ կասեն և թագաւորանիստ
քաղաք. նորա մէջ հազար և մի եկեղե-
ցի կար շինած. այժմ էլ կան մնում են
դոցա աւերակները:

Մեր մայր եկեղեցին այժմ Վաղարշա-
պատ է. Վաղարշապատն էլ մի ժամանակ
մայրաքաղաք էր. այդ մայր եկեղեցուն էջ-
միածին ենք ասում: Այդ տեղ է հոգևոր
Սինօղը այժմ:

Կաթուղիկոսն էլ, որ մեր Հայրապետն է,
էջմիածին է նստում. մեռոնն էլ այն տեղ
են եփում: Մեռոն օրհնելիս շատ մեծ
հանդէս է լինում. շատ մարդիկ են հաւաք-
վում այն տեղ շատ քաղաքներից և հեռի
հեռի տեղերից Մեռոնի հանդէսը տեսնե-
լու համար:

Կաթուղիկոսին օծումեն էջմիածնում:
Կաթուղիկոսին առաջ ընտրումէ Աղզը, և
յետոյ եպիսկոպոսները օծումեն նորան Կա-
թուղիկոս: Բայց եպիսկոպոսներին ձեռնա-
դրում է Կաթուղիկոսը:

Քահանաներին ձեռնադրում է եպիսկո-
պոսը հոգևոր Սինօղի հրամանով: Քահա-
նաներին ո՛ր քաղաքում ո՛ր եկեղեցում
ասես կարելի է ձեռնադրել, իսկ Կաթու-
ղիկոս օծել կամ եպիսկոպոս ձեռնադրել
ամեն տեղ չէ կարելի:

Անի քաղաքում որքան եկեղեցի կար: Մեր մայր եկեղեցին այժմ
որտեղ է. մեր հոգևոր Սինօղը: Որտեղ է մեր Հայրապետի այսինքը
Կաթուղիկոսի աթոռը: Որտեղ են օրհնում մեռոնը, եւ օծում Կաթու-
ղիկոս կամ ձեռնադրում եպիսկոպոս. իսկ քահանաներին:

33.

Պետրո՛ս, ես գիտեմ կէտերի անուննե-
րը, կուզե՞ս, քեզ էլ սովորեցնեմ. իմ վար-
ժապետը ինձ ասում է, թէ ինչպէս խօսե-
լու ժամանակ կանգ ենք առնում, նոյնպէս
էլ զրելու ժամանակ պիտի կանգ առնենք,
որտեղ կանգնումենք, որտեղ միտք է յայտ-
նվում, որտեղ մի՛տք է վերջանում, որտեղ
հարցնումենք, դնում ենք այս նշաները,
որին և ասումենք կէտեր. ահա՛ տես և
յսի՛ր: —

1,	բութ — — } ' ,	7,	շէշտ — — } ' ,
2,	ստորակէտ — } ,	8,	պարոյկ կամ հարցական } °
3,	միջակէտ — } .	9,	պատիւ — — } L
4,	վերջակէտ — } :	10,	չակերտ — — } „
5,	մակակէտ ('ի) } ' ,	11,	փակագիծ — — } ()
6,	ենթամնայ — — } ~	12,	երկար կամ զարմացական — — } ~

Ով կարող է գրել բութ, ստորակէտ, միջակէտ, վերջակէտ, մակակէտ, ենթամնայ, շէշտ, հարցական. պատիւ, փակագիծ, չակերտ դարմացական:



34.

Պետրո՛ս, մտքիդ պահել ես այն խօսքերը, որ անցեալ օրը ասաց վարժապետը ուսումնարանում տարուայ, ամիսների, շաբաթների, օրերի և ժամերի վերայ: Գիտե՛ս, որ ասաց թէ տարին ունի և չորս եղանակ. — Ո՛չ, Արշա՛կ Չան, ես մոռացել եմ տարուայ եղանակների անունները: Խնդրու՛

մեմ՝, դու պատմի՛ր ինձ մի անգամ, ես կլսեմ ուշադրութիւնով, կսովորեմ սիրով և կպահեմ մտքումս հաստատ:

— Եթէ այդպէս է, եթէ ուշադրութիւնով կլսես սիրելի՛ Պետրոս, ես ուրախութեամբ կպատմեմ, ուրեմն լսի՛ր:

Տարին ունի չորս եղանակ. —

- 1, Գարուն. 2, Ամառն.
- 3, Աշուն. 4, Չմեռն.

Տարին լինում է երեք ամիս Գարուն, երեք ամիս Ամառն, երեք ամիս Աշուն, երեք ամիս Չմեռն:

Դուք էլ կարող էք պատմել: Արշակ, առաջ դու պատմի՛ր, յետոյ միւսերը կպատմեն հերթով:

35.

Հինգ զգայարանք.

Տեսանելիք. լսելիք. հոտոտելիք. ճաշակելիք. շոշափելիք:

աչքեր, ախանջներ, քիթն, լեզու, մատներ:

ինչ են անում աչքով, ախանջով, քթով, լեզուով, մատներով:

Չորս տարերք.

Հող. օդ. հուր և ջուր:

Ինչի են պէտք դորա. առանց դոցա մարդս կարող է ապրել եւ այն:

36.

Քարուն.

Ահա՛ շուտով կգայ զարունը. զարունքին ծառերը ծաղկումեն, դաշտերը, սարերը, ձորերը և հովիտները կանաչումեն: Օրերը սկսումեն տաքանալ. մեղանից հեռացած խռոված ծիծեռնակները գալիս են մեր երկիրը, հաշտվումեն մեզ հետ և ուրախացնում մեզ իրանց ծլվլալե երգերովը:

Ծիծեռնակները կմնան մեր երկրում մինչև աշունքը. բայց երբ կգայ նորանց թռչնամի ցուրտը, կփախցնէ նորանց և սիրուն

սոխակներին մեր պարտէզներից, մեր երկրից և կառոցնէ մեր ոտք ու ձեռքերը, մինչև որ կհասնէ այդ քարասիրտ, խեղճերին ճընշող սառցնող ցուրտի քամակից դարձե՛ալ նորան հալածող փախցնող շրքր-ամառը:

Քարունքին ամեն երգող թռչունները սկսում են երգել: Երգում է արտուտը, սոխակը, ծիծեռնակը, դեղձանիկը և ուրիշ շատ թռչուններ, ամենից լաւ երգողն սոխակն է և դեղձանիկը: Քարունքին թռչունները ձու են ածում. ձուտ են հանում (ձաղեր): Կարաւի ձաղերը աշունքին բաւական մեծացած են լինում. նորանց միսը շատ համով է լինում:

37.

Քարուն է եկել նախշուն թևերով, Նախշուն թևերը պէսպէս ձևերով, Գոյն գոյն ծաղիկներ, կարմիր ու սպիտակ, Վարդ, միխակ շուշան անուշ հոտերով: Երկինք ու երկիր քեզ տօնեն, զարուն,

Ձի եւ քան զամեն եղանակ սիրուն,
 Նա անձրև ցօղէ առատ 'ի վերէն,
 Դա օրհնել տայ քեզ եկուոր հաւերուն:
 Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
 Կենսաբեր հովը փչէ 'ի լերէն,
 Ա՛ն, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
 Արդեօք դու ի՞նչ բախտ բերիր ինձ Տէրէն:

38.

Հողի տակ քնած կենդանիները սկսում են դուրս գալ գարունքին իրանց բուններից մրջիմներն ևս դուրս են գալիս օրերի տաք ժամանակ և սկսում են աշխատանքի գնալ:

Ամառը մրջիմները հատիկներ փոքրիկ փոքրիկ սերմեր են հաւաքում հողի տակ իրանց բունների մէջ, որ ձմեռն նորանցով կերակրվեն:

Մենք ևս մեր փոքրիկ ժամանակը աշխատում ենք, սովորում ենք կարգալ ու զրել. յետոյ սովորում ենք լաւ արհեստ. հոգս ենք անում քանի մեծացել ծերացել

չենք, որ ծերացած ժամանակներս հանգիստ ապրենք:

Իմ եղբայրը գնացել է քաղաքը այն տեղ նա լաւ կարդումէ. ուսուցիչները գրում են թէ նա շատ լաւ է կարդում. շուտով կաւարտէ իրա ուսումը և կստանայ վկայագիր իրա ուսման համար:

Յետոյ նա մտնելու է արհեստի, լաւ արհեստ է սովորելու. լաւ արհեստն էլ լաւ բան է, մարդու համար հարստութիւն է: Մի եղբայր էլ ունիմ, ծառայում է պալատում. նա լաւ զիր է գրում. մեծաւորները նորան սիրում են և գովում:



ձի և քուռակ

39.

Ձին ընտանի և ամենահարկաւոր կենդանի է մարդու համար, նա մարդու օգնա-

կանն է իրա բեռներ կրելովը. իմ հայրս ա-
սումէ միշտ, որ բարի մարդը իրա անասու-
նին լաւ կպահէ:

Մենք ունինք մի ձի, որ ունի մի քու-
ռակ, ես միշտ տեսնում եմ, թէ ինչպէս է
ծծում նա իւր մօր կաթը. մայրն էլ նո-
րան շատ սիրով կաթն է տալիս:

Գարունքին և ամառը կթում են ոչ-
խարներին և կովերին, նորանց կաթնից շե-
նում են լաւ պանիր և իւղ: Պանիրը և իւղը
շատ հարկաւոր են ուտելու համար: Ոչ-
խարի պանիրը լաւ է կովի պանրից, եթէ
լաւ շինես:

Կան էնպիսի երկիրներ, որտեղ շատ լաւ
են շինում պանիրը և նոցա շինածը մեր եր-
կրում շատ թանկ է ծախվում:

Եթէ մեր ոչխարների կամ կովերի կաթ-
նից նոքա պանիր շինեն, մերն էլ լաւ կլի-
նի. մեզանում մարդիկ պանիր շինելու
ձևը չգիտեն:

Լաւ արհեստը հարկաւոր է սովորել, որ
մեծ օգուտ է բերում. ով որ լաւ ուսում
ունի կամ լաւ արհեստ, կարող է լաւ ապ-
րել աշխարհումը:

40.

Ամառն.

Ամառն արեւը իւր այրող ճառագայթ-
ները թափում է մեր աշխարհի վերայ.
հասացնում է ամեն տեսակ պտուղներ, թէ
դաշտային և թէ այգիների. երբ հասնում
կարմրում են հացային բոյսերը, ուրախա-
նում են ժիր և աշխատող հնձողները:

Հնձողները հնձում են իրանց արտերը,
բերում ժողովում են կալերի մէջ խուրձե-
րը: Յետոյ նորանց կասում են. կասած ցո-
րեանը տանում ածում են ամբարների կամ
հորերի մէջ:

Բայց յարդն էլ (տարմանն) պահում են
կալերում մարակների մէջ, որ ձմեռն նո-
րանով կերակրեն անասուններին: Աւելա-

ցած տարմանն էլ գիւղացիք տանում վաճառում են մօտ քաղաքներում:

Նոյնպէս էլ աւելացած ցորենից վաճառում են քաղաքացիների վերայ, և նորանից ձեռք բերած փողովը գնում են իրանց համար հագուստ և ուրիշ հարկաւոր բաներ կամ անասուններ, այսինքն գոմէշ, ձի, եզն, կով, ջորի, էշ, որոնք հարկաւոր են մարդու կառավարութեան համար:



Գիւղականներն ևս մեզ պէս մարդիկ են, մենք ևս եթէ գիւղում ապրելու լինինք, պէտքէ նորանց պէս վար ու ցանք անենք:

Եթէ աշխարհում գիւղականներ չլինին, քաղաքի մարդիկը ինչո՞վ կապրեն: Քաղաքի մարդիկը առ և տուր են անում, ար-

հեստներով են պարապվում և ծառայութիւններ են անում կամ թաղաւորական տեղերում կամ հարուստ մարդկանց մօտ:

Քաղաքի մարդիկն փող են աշխատում, և այդ փողերիցը տալիս են գիւղականներին, որ նորանք էլ փողի տեղ իրանց պրտուղներիցը տան: Ուրեմն մարդիկ փոխում են փողը ապրանքով և պտուղներով, պրտուղներն էլ ապրանքներն էլ փողով ու այնպէս կառավարվում միմեանցով:

Ամառը արեգակը ինչ օգուտ է տալիս պտուղներին: Երբ են հնձում ցորեանք: Ամառն բանի ամիս է լինում: Գիւղացիք ինչով են պարապվում: Քաղաքացիք եւ պէն: Սմառնից յետոյ տարուայ ձր եղանակն է գալիս եւ որքան ամիս է տեւում:

41.

Աշունք.

Աշունքը սկսվում է սեպտեմբերի տասնից, որ և տեւում է երեք ամիս, այս ժամանակ արդէն հասած են լինում ամեն տեսակ ծառերի պտուղներ. գիւղացիք քաղում են իրանց քրտինքով աշխատած գոյացը-

րած պտուղները այսինքն տանձր, խնձորը, ալբալին, կեռասը, սերգելիլը, նուռն, կաղինը, ընկոյզը, շագանակը, թուզը, խաղողը և ուրիշ շատ պտուղներ:

Այդ պտուղներից չորացնելին չորացնում են, վաճառելին վաճառում են, պահելին պահում են, սերմելին սերմում են: Քաղում են խաղողը և հաւաքում են հնձանի մէջ, հնձանն էլ այնպէս է լինում շինած, կուպրով կամ ուրիշ բանով պնդացրած, որ ամենեւին խաղողի ջուրը անց չկենայ սալայատակից կամ հնձանի կողքերից:

Մե երկու տղամարդ մտնում են հնձանի մէջ ոտները վերքաշած. լցնում են խաղողը քաակների մէջ և տալիս են ոտների տակ, այնքան կոխ են տալիս, վերջումն էլ ծնկներով հուպ տալիս, որ բոլորովին ցամաքում է խաղողի ջուրը:

Այդ ջրին ասում են շիրայ, որ գնում թափվում է հնձանի առաջ շինած քարէ աւազանի մէջ: Յետոյ աւազանի շիրան

ամաններով վեր են առնում և տանում ածում են կարասների մէջ:

Շիրան կարասների մէջ այնքան է եփվում ինքն իրան, մինչև որ հանդարտում է: Յետոյ շիրայի հետ խառնած ճեճան ջոկում են և գինին պարզեցնում: Այդ նոր պարզեցրած գինուն ասում են մաճառ. նա շատ զօրեղ է լինում հին գինուց: Խաղողից շինում են չամիչ. եփում են և ուռփ այսինքն բաքմազ, շինում են և օղի և քացախ:

Աշունը երբ է սկսվում եւ քանի ամիս տևում: Աշունին ծառերի պտուղները ինչպէս են լինում: Գիւղացիք ինչ են անում: Խաղողից ինչ են շինում: Սերմերը երբ են ցանում:



Մեր երկրի պտուղներից այսինքն կաղին ընկոյզ և այլն մանաւանդ գինիներից տա-

նում են ծովով կամ ցամաքով Ռուսաստանի տօնավաճառը այսինքն եարմարկա, և կամ ուրիշ քաղաքներ, այնտեղ վաճառում են երբեմն լաւ երբեմն վատ գնով, բայց գնողները պատրաստում են նորանից թանգազին խմիչքներ և աւելի աշխատանքով վաճառում մեր վերայ:

Եթէ լաւ արհեստներ մեր երկրում ևս լինէին, էլ այս տեղից չէինք տանել հեռի տեղեր ծախելու մեր երկրի զինին, կաշին, մորթին, տորոնը և ուրիշ շատ ապրանք: Բնկուզե փայտը ի՞նչէ, որ մեր երկրից տե՛ս ո՛րտեղ են տանում, մինչև անգամ արտասահման, որտեղ ուտումը և արհեստը ծաղկած են: Եթէ մեզանում ևս լինէին այդ տեսակ արհեստներ, մեր ապրանքը կմնային մեր երկրում և կշահուէին մեր երկրի մարդիքը նորանցով:

~~~~~  
 Մեր երկրի պտուղներից որտեղ են տանում վաճառելի համար: Ասացէր թէ ինչ տեսակ ապրանքներ են տանում մեր երկրից հեռի տեղեր վաճառելու: Մեր երկրումն էլ բարձր ուտում բարձր արհեստ կան:

Չմեռն.

Չմեռն սկսվում է դեկտեմբերի տասնից, որ և տևում է նոյնպէս երեք ամիս: Չմեռուայ ժամանակը արեգակը թէպէտ փայլում է պայծառ, բայց այնքան տաքութիւն չունի ինչպէս ամառը, որովհետև նա երկար ժամանակ չէ մնում երկնքի երեսին, և բաց ՚ի դորանից նա իւր ճառագայթները ուղղակի չէ արձակում մեր վերայ ինչպէս ամառը:

Չմեռուան օրերը կարճ են, իսկ զիշերները երկար: Հիւսիսային երկիրներումը ճմեռն երկար է լինում և երբեմն սաստիկ ցուրտ: Գետերը և լիճերը սառչում են այնպէս, որ ոտքով և կառքով կարելի է նորանց վերայով ման գալ:

Չմեռը երկիրը ծածկվում է ձիւնով. բայց ձիւնը շատ օգտաւէտ է և շատ հարկաւոր, որովհետև սաստիկ ցուրտ ժամանակը, ձիւնի տակ խոտերի և ծաղիկների սերմերը և ցանած արտերը տաք պահպանվում են և

անփնաս մնում. առանց ձիւնի ամեն սեր-  
մերը և ցանած արտերը կարող են ցրտա-  
տար լինիլ:

Չմեռը անտառներումը թռչուններ քիչ  
են լինում նոյնպէս և դաշտերումը չորքո-  
տանիք. իսկ միջատները բոլորովին անհե-  
տանում են. նորանցից շատերը աշունքին ձու-  
թողնելով՝ ձմեռը կեանքից զրկվում են.  
միւսները մտնում են խոր՝ գետնի տակ, ինչ-  
պէս մրջիկները: Մի քանի միջատներ բոլոր  
ձմեռը քնում են և միայն գարնան ժամա-  
նակն են դարթնում, երբ որ երկիրը տաքա-  
նում է:

Շատ թռչուններ ձմեռը չեն մնում մեր  
կողմերում, նոքա թռչում են դէպի տաք  
երկիրները: Ծիծեռնակը, արտուտները և  
սոխակները աշունքին մեզանից հեռանում են:  
Նոյնպէս վայրենի սազը, բազը, կռունկը,  
կարասը և այլն աշնան ժամանակը թռ-  
չում են հիւսիսից դէպի հարաւ, երկայն շար-  
քով, երկնքի վերայ ձգուելով, ձայն ձայնի

խառնելով: Նոքա շատ լաւ են զգում, թէ  
որքան դէպի հարաւ է, այնքան տաք է:

Չմեռն քանի ամիս է լինում: Չմեռուայ օրերն են կարծ թէ գիշեր-  
ները: Չմեռն ծիւնը ինչ օգուտ է տալիս սերմերին և բոյսերին: Երբ են  
շատ թռչուններ և անասուններ գտանվում թէ անտառներում և թէ  
դաշտերում: Չմեռն ցրտին չլիմացող թռչունները դէպի իւր են թռ-  
չում: Յոյց տուէր արեւելեան, արեւմտեան, հարաւային և հիւսիսային  
կողմերը:

44.

Ամեն բան իւր տեղը:

Արշակը երբ որ վարթնում էր առաւօտ,  
սկսում էր իւր հագուստների ետեւից ընկ-  
նել դէս ու դէն ման գալ. նորա գուլքայի  
մէկը սեղանի վերայ էր լինում, միւսը սե-  
ղանի տակ. մէկ կոշիկը անկողնակալի տակ,  
միւսն էլ չէր գտանվում. ամեն առաւօտ  
այդպէս էր անում և ուսումնարանից դա-  
սից ուշանում:

Ով էր ուշանում դասից և ինչու: ինչ է անկողնակալը:

45.

Մանկական ակնոցներ.

Մի օր փոքրիկ Տեղբանը ասաց իւր հօրը. «Հայրի՛կ, ա՛ռ ինձ համար ակնոցներ, ես էլ կամենում եմ քեզ պէս զրքեր կարդալ:» — «Լա՛ւ է որդեա՛կս,» պատասխանեց հայրը, «Ես քեզ համար կառնեմ ակնոց, միայն մանկական:» Միւս օրը առաւ նորա համար այբբենարան:

46.

Նապաստակ և ողնի.

Սիրուն ու քնքուշ նապաստակը մի օր ասաց ողնուն, «Եղբայ՛ր ողնի, դու ինչ տրպեղ և փշ փշոտ հագուստ ունիս:» — «Ճըշմարիտ է, պատասխանեց ողնին, «Բայց դիտե՛՛ս նապաստակ եղբայր, իմ փուշերն ինձ աղատում են շան և գայլն ատամներից, քո սիրուն փափուկ մորթին էլ պէ՛տք է գալիս քեզ արդեօք սյղպիսի դիպուածքում:» Նապաստակը պատասխան տալու փոխանակ՝ մի ծանր սխ քաշեց:

Պատմեցէք միտքը:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ:

Հրակէր դէպի ուսումնարան:

Հաւր խօսեցաւ, օրը բացուեցաւ, արևն էլ վաղուց էլաւ բարձրացաւ: Խելօ՛ք մանուկներ, շո՛ւտ հաղնուեցէք, շուտով դուք դասատո՛ւն հաւտքուեցէք:

Մարդ և անասուն, գազան և թռչուն ամենքն իրանց գործին են գնում. միջիւնը բերանով կերակուր է տանում, մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Պաշտը գոյնզգոյն ծաղիով զարդարուած, մարգագետինը կանաչ հաղնուած, անտառը ձմեռուայ քնից զարթնացած, շարժումէ իւր տերևները կանաչ:

Չկնորսներն իրանց ուռկանն են քաշում, հնձողներն իրանց մանգաղը շարժում և հասած արտերի ցորեանն հնձում: Դուք էլ, մանուկներ, ձեր զրքերն առէք. Աստուած ծուլութիւն չէ՛ սիրում երբէք:

Երկու խօսի.

Մի և նոյն երկաթի կտորից և մի և նոյն արհեստանոցում շինուած էին երկու հատ խօսի: Մի երկրազործ զնեց դոցանից մինը և սկսեց գործ ածել նորան, բայց միւսը երկաթ

*Handwritten signature or scribble in blue ink.*

ժամանակ մնաց անօգուտ վեր ընկած վաճառականի խա-  
նութում: Պատահեց մի ժամանակ, որ երկու ընկերները  
միմեանց տեսան: Երկրագործի մօտ եղած խփր արծաթի  
պէս փայլում էր ա՛յնպէս, որ նոր շինած ժամանակը ամե-  
նեւին չէր պսպղում, բայց խանութում ընկած անգործ  
մնացած խփրը սեւացել էր ու ժանգոտուել:

«Ասա՛ խնդրեմ, դու ինչո՞ւ այդպէս փայլում ես «  
Հարցրեց ժանգոտած խփր իւր ընկերից:— «Սշխատելուց,  
սիրելի՛ս, պատասխանեց միւսը, բայց եթէ դու ժանգո-  
տել ես և առաջ վանից աւելի վատացել, այդ նորանիցնէ,  
որ այսքան ժամանակ կողքիդ ընկած ոչինչ չես արել:

Բանն անելով, էշը քշելով:

**Ո՞վ է հպարտանում:**

Հարցրեց երեխան հօրից, «չայրի՛կ, ասա՛ ինձ, այդ  
ինչնե՞ն է, որ շատ հասկեր գլուխները քաշ են զցած  
դէպի գետինը, իսկ շատերի գլուխները բարձր են մնա-  
ցած:»

— «Որդեա՛կս: պատասխանեց հայրը, ա՛յն հասկերը  
րո՞նք լիքն են և պարարտ, խոնարհվում են դէպի գետի-  
նը, իսկ որոնք դատարի, բարձրացնում են իրանց գլուխ-  
ները դէպի բարձր:»

Որ խոնարհեցի, բարձացի:

Ծառը քանի բար շատ ունենայ, գլուխը կախ կգցի:

**Երաշտութիւն.**

Ամառը շատ չորային է անցնում. արեգակը օրէ ցօր  
ամեն բան խանձումէ և չորացնում. թանձր փոշին փո-  
ղոցներում սիւների պէս բարձրանում. երկիրը չորանում  
քար կտրվում և ճաքճաքոտում. լիճերն ու առուները ցա-  
մաքում. ծաղիկներն էլ տխուր տրտում գլուխները քաշ  
զցում. կանաչ խոտերը դեղնում և հացաբոյսերը զուռատ-  
վում թառամում:

Հողագործ զիւղացին տեսնումէ տխուր աչքով իւր դաշ-  
տը իւր վարելահողը և ասում. Տէ՛ր, ես ամենը արի, ինչ  
որ ձեռիցս եկաւ. ինչպէս հարկն էր, այնպէս ցանեցի արտա  
ջերմեռանդութենով, պարարտ և առատ սերմերով, և  
տափանեցի նորան լաւ տափանով, (ցաքանով), այժմ թո՛ղ  
լինի քո սուրբ կամօք:

Երկնքի պարտքը դեռնին չի մնալ, դեռնինը երկնքին:

**Զուր.**

Անջուր չէ կարող ապրել ո՛չ մարդը, ո՛չ անասուն և ո՛չ  
ամենափոքր միջատը չէ կարող աճել և ամենափոքր բոյսը:

Անջուր տեղերում միայն քար ու աւազ են երևում:  
Այսպիսի տեղերը կոչվում են անապատներ:

Զուրը լինումէ ջրհորներում, լճերում և ծովերում:  
Ծովային ջրերը դառն են և աղի. իսկ գետերի և մի քանի  
լճերի ջրերը քաղցրահամ են: Լաւ ջուրը պարզ է լինում.

*Handwritten notes in blue ink at the bottom of the page.*

և թափանցիկ, նա չէ ունենում ո՛չ հոտ և ո՛չ համ:

Տաքութենից ջուրը եռ է դալիս և զոլորչանում,  
խակ ցրտից սառչում է և սառոյց դառնում:

Ձեր խնած ջրերը ինչի՞ ջրեր են. ո՞ր ջուրն է առողջարար, զնացո՞ղ  
Քէ կանգնած ջուրը:

**Չրադայ**

Չուրը նաւից սուր հոսելով

կատաղաբար ձայն է հանում,

եւ Չրադայի յատակի տակ

կարծես ասպեր են որոտում:

Անիւնների խիստ շարժուելուց

Ամբողջ յատակն է դողդողում.

եւ երկանի պտտվելուց

Փոքրիկ լեզուակն է չոխչոխում.

Նա շարժվում է օրօրվելով,

եւ ամբարի բերանն շարժում.

Որից վերին երկանի մէջ

Մաքուր ցորեանն է կաթկաթում:

Իսկ քարի տակ մանրվելով

Ալիւր դարձած դուրս է թափվում,

եւ ջրադայը դեղեցկապէս

Իբր ծերիկ ալեգարդում:

Չուրն իւր ճանապարհը կկանէ:



ձի:

Մեր ընտանի ամենահարկաւոր կենդանեաց մէկն էլ  
ձին է: Չիւր գլուխը երկայն է և գեղեցիկ, պարանոցը  
դիւրաթեք, կուրծքը լայն, ուսները երկայն և բարակ, և  
խրաչանջեր ոտի վերայ կայ մի մի պինդ սմբակ: Չիւր բո-  
ւրը մարմինը ծածկուած է կարճ և փայլուն մազով, բայց  
պարանոցը ծածկուած է և երկար մազերով, որ կոչվում  
է բաշ:

Չին զանազան դոյնի է լինում, սեւ, սպիտակ, կարմիր,  
մանրադոյն և այլն: Չիւր աչքերը մեծ մեծ են, և ձուածեւ  
և այնպէս են նայում, որ կարծես թէ բան են հասկա-  
նում: Նորա ախանջները երկայն են և կանդուն. դունջը  
երկայն է և սուր, և խրաչանջիւր ծնօտի վերայ դոնը-  
վում են երեք տեսակ ատամներ՝ առաջնատամներ, ժանիք  
և սեղանատամներ:

Չին էլ մի և նոյն հինգ արտաքին զղայարանքն ունի, ինչ  
որ մարդս ունի, բայց ձիւր լսելիքը աւելի սուր են, քան  
թէ մարդու: Չին էլ մարդու պէս ներքին գործարաններ

ունի, ինչպէս՝ սիրտ, թոք, ստամոքս, ուղեղ և այլն:

Ձին շատ զօրեղ է, կայ այնպիսի ձի, որ եթէ ճանապարհը լաւ լինի, կարող է հարիւր փութից աւելի ծանրութիւն քարշելով տանել: Ձին սաստիկ արագ է վազում. լաւ ձին մի քառորդ ժամումը եօթն վերստից աւել կարող է վազել: Ձին վախ չունի, նա պատերազմի մէջ շատ քաջ է:

Ձին շատ օգտակար է. մարդը նորանով ման է գալիս, բեռն է կրում. իւր դաշտը հերկում է. նորան կառքում և սայլում լծում է և զանազան բաներ է կրում,

Ձիւ կաշին գործ են դնում կոշիկների համար և նորա աղբովը դաշտերը պարարտացնում են: Թափառական և խեղճ ժողովուրդը ձիւ միսը ուտում է: Նորա կաթինցը մի արբեցուցիչ և սննդարար խմելք են պատրաստում, որ կոչվում է կումիս:

Ամենալաւ և ազնիւ ձին Արաբեայի և Անգղեայի ձին է. մեր Հայաստանումն էլ գովելի է Ղարաբաղու ձին:

Պատմեցէք թէ ձին արտօսին ինչ զգայարաններ ունի, եւ ինչ օգուտ է տալիս մարդուն. որտեղի ձիանքն են գովելի:

### Տարաբախտ Հայ մանուկ:

Անօթի ծարաւ, գլուխը քաշ գցած,  
Իւր ծնօղներից վաղուց որբացած

Հօր տանից տեղից արդէն հեռացած,  
Երջում էր մանուկն մտքով մնորված

Երջում էր բոկոտն, շորերը պատուտած,  
Աղի արտասուքով աչքերը լցուած.  
Ինչպէ՞ս անզգայ սիրտ պէտքէ լինէր,  
Որ այս թշուառին տեսնէր, չցաւէր:

Իւր բնիկ երկրից ծնօղներից զրկուած,  
Օտար աշխարհում գերի մատնուած.  
Անգութ մարդերից հալածուած տանջուած,  
Խեղճ մանկան ճակատին ա՛յս էր զրուած:

Շատ տեղ ման եկաւ, շատերին խնդրեց,  
Իւր սրտի ցաւերն շատերին պատմեց,  
Բայց նորա խնդիրն ՚ի զուր անցկացաւ,  
Սրտի զգացմունքն ո՛չ ոք չիմացաւ:

### Բարեգործութիւն:

Մի գիւղի քահանայ եկեղեցու եկամուտքից հարիւր մանէթ յետ էր զցել նոր սկիհ զնելու համար: Մի օր այդ փողերն վեր առաւ զնաց քաղաք սկիհը զնելու: Նրբ որ նա հարց ու փորձ անելով որոնում էր մի այնպիսի խանութ, որտեղ կարողանար գնել իւր խնդրած առարկայն, յանկարծ մի դրան ետևից բարձր ձայներ լսեց:



Հետաքրքրութենից շարժված քահանայն կամեցաւ իմանալ այդ աղմուկի պատճառը. ներս նայեց բակի մէջ և ի՛նչ տեսաւ:— Գետնի վերայ թափած զանազան իրեր, ամաներ, շորեր և ուրիշ տեսակ կահ ու կարասիք: Նորանց մօտ կանգնած էր պօլիցիական ատտիճանաւորը, որ աճուրդով ծախում էր մէջ տեղ թափած իրեղէնքը. մի կողմուսն էլ կանգնած մարդկանց բաղմութիւն, որ ուզում էին օգուտ քաղել այն յարմար դէպքից էժան ապրանք գնելով, իսկ միւս կողմում հիւանդոտ դէմքով մի մարդ, կողքին էլ դու՛ժ եկած նորա կիներ, և դոցա մօտ երկու փոքրահասակ մանուկներ: Գոքա ամենքն էլ լուռ ու մունջ կանգնած էին մի կողմը և արտասուքը հանդարտ հանդարտ զլորվում էր նոցա երեսով:

Այս ցուալի տեսարանը քահանայի աչքովն ընկաւ թէ չէ, իսկոյն սիրտը մորմոքեց, մօտ դնաց խեղճ մարդուն և ասաց արբևի այս իրեղէնները քոնն են. ինչից արդեօք ստիպուած ծախելես տալիս տանդ կահ ու կարասիքը:՝

— Ծախել տուողը, տէ՛ր հայր, ոչ թէ ես՝ այլ իմ տանուտէրն է, որ դանդատել էր ինձ վերայ: Մի տարուց աւելի է, որ համարեա թէ շարունակ հիւանդ էի և չէի կարողանում փող աշխատել, այդ պատճառով պարտքի տակ ընկայ ես, որի համար ահա ծախում են տանս սարք ու կարգը, որ պարտքս վճարեն, թէ ի՛նչ պէտք է անեմ յետոյ, այդ միայն Աստուած գիտէ:

Քահանայն այս պատմութիւնը որ լսեց, իսկոյն դադարեցրեց պօլիցիականի դործը և հարցրեց թէ ի՛նչքան է պարտ այդ մարդը:

— Նարիւր մանէթ,՝ պատասխանեց ատտիճանաւորը:

Քահանայն իւր դրպանիցը հանեց սկիհի հարիւր մանէթը, հինգ մանէթ էլ իրանից աւելացրեց և տուեց խեղճ մարդու պարտասիրոջը:

Աճուրդը վերջացաւ: Քահանայի մարդասիրութիւնը ամեն մարդ զովեց. իսկ խեղճ մարդը արտասուք թափելով շնորհակալ էր լինում իւր ազատողից և օրհնում նորա կեանքը:

Յետոյ քահանայն դարձաւ դիւղը և ժողովրդին պատմեց այս անցքը, աւելայնելով թէ Աստուծոյ առաջ պահասութիւն չէ մեզ համար առաջուայ պէս հին սկիհում պահել սրբութիւնը. այլ այն հեղ Փրկիչը, որ չար համարհեց ախուռի մէջ ծնանիլ, աւելի ուրախ կլինի մեր այս բարեկործութեան վերայ, քան թէ նոր սկիհ գնէլինք նորա արխն ու մարմինը մէջը պահելու համար:

Պատմեցր մեր կարդացածի միտքը:

Մի վիկխառփայից հարցրին թէ, ի՛նչ բան առաւել հին է. նա պատասխանեց— Աստուած, որովհետև նորա

գոյութիւնն անսկիզբն է: Հարցրին ի՞նչ բան ամենագեղեցիկ է, պատասխանեց,—Սշխարհը, պատճառ, նա Աստուծոյ գործն է, և նորանից աւելի գեղեցիկ բան չկայ:— Ո՞ր բանն է ամենից մեծ,—Տարածութիւնը, որովհետև ամենայն բան պարունակում է իւր մէջ:—Ի՞նչ բան աւելի շուտափոյթ է:—Միտքը, ըստ որում շուտ թուում է ամենայն տեղ:— Ո՞ր բանն է ամենից զօրաւոր:— Կարգը, որ ամեն բանի յաղթում է:— Ո՞վ է վերջապէս ամենից իմաստունը:— Ժամանակը, որովհետև ամենայն բան գտնում է:

**Շներ:**

Լոնդոնումը շները պատիւ ունին, որովհետև այն տեղի շները շատ օգուտ են բերում մարդուն հրդեհների ժամանակ, նոքա զինուորներից առաջ մանում են կրակ բռնած տունը և ազատում են կրակից ինչ որ պատահում է: Դուրս են բերում երեխաներին, փոքր շներին, կատուններին, հաւերին և այրվելուց ազատում են:

Մի անգամ պատահեցաւ, որ հրդեհի ժամանակը մի ազատող շուն ներս մտաւ այրվող սենեակը, որի մէջ մի փոքր շուն դուրս գալու ճանապարհ չգտնելով շփվել էր ու ահից դողդողում, բռնեց մեծ շունը փոքր շան վզեքը և ազատեց նորան կրակից, չնայելով որ փոքր շունն իւր ահիցն կծոտում էր իւր ազատողին:

Զվեցերեայումը Սենգոզարտ սարի վերայ էլ մի տեսակ շներ կան, որոնք օգնում են մարդկանց: Այն սարի

ձիւնը միշտ անպակաս է լինում և մեծ վնասներ է պատճառում ճանապարհորդներին: Այն տեղ մի հիւրանոց կայ շինած, որի տէրը պահում է շներ ճանապարհորդներին օգնութիւն հասցնելու համար: Նա կախում է շների վզից զինկով լեքը շէշեր. այդ շները սարի նեղ ու ծուռ ճանապարհներով վազվազում են և եթէ գտնում են ձիւնի մէջ թաղուած մարդ, տալիս են գինին սառածներին, որոնք ուշքի են դալիս և ազատվում են սառվելուց:



**Շունը և երեխան**

Մի անգամ այդ շներից մէկը գտնում է մի եօթն տարեկան երեխայ ձիւնի մէջ ընկած. խեղճը սառել էր համարեա թէ, և փոքր էլ եթէ որ մնար, կմեռնէր ցրտիցն ու քաղցածութիւնից: Շունը մօտ է գնում երեխային և լիզում է նորա սառած ձեռները. երեխան ուշքի է գալիս և ընկնում շան մէջքի վերայ, և բռնում նորա մազերից, շունը մեծ զգուշութենով տանում է նորան հիւրանոցը և այսպէս ազատում նորան մահիցը:

### Ծառերն ու կացինը.

Ծառերն անտառում երբ շատ նեղացան  
 կացնի ձեռքիցն, ու էլ չիմացան  
 ի՞նչ անեն, որ իրանց զլուխը պահեն,  
 Խորհուրդ արին, որ մի հնարք գտնեն:

«Կացինն ի՞նչ է, որ մեզ կարողանայ  
 Զօր անել յազթել, ի՞նչ մեծ բան է նա:»  
 Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.  
 Մենք որ կոթ չտանք, կացինն ի՞նչ է որ  
 Յանդղնի անել մեզ կտոր կտոր:

Թող իմացողը ինքն իմանայ,  
 եւ ՚ի զուր տեղը կացնից չնեղանայ.  
 Ով որ կոթ կտայ պողկոտի կացնին,  
 Թող հողուոյն ասէ առաջ իւր անձին:

### Ստախօս տղայ.

Մէկ որիբամոլ տղայ տեսնում է իւր հօր սեղանի վե-  
 րայ մէկ եփած խնձոր, վեր է առնում նորան և ուտում:  
 Հայրը երբ որ տուն է դալիս, տեսնում է, որ խնձորը չը-  
 կայ, հարցնում է տղայից, «խնձորն ի՞նչ էլաւ, չլինի՞ թէ  
 կերած լինիս» — «Ո՛չ, հայր, ես չեմ կերել» — Շատ լաւ,  
 որդիս, շատ ուրախ եմ, որ դու չես կերել, որովհետեւ

նորա մէջը թոյն էի դրել միներին սպանելու համար:

Այս խօսքը որ լսեց երեխայն, շփոթվեց խելոյն, երեսի  
 գոյնը թռաւ, զլուխը պորտովեց և սկսեց վայր ընկնիլ:  
 «Ի՞նչ է, որդիս, ի՞նչ պատահեցաւ քեզ:» — «Ո՛հ, հայր,  
 Թունաւորված եմ ես:» — «Ուրեմն դո՞ւ ես կերել խնձորը.  
 մի՛ վախենար, թունաւորված չես, ես կամենում էի զողջ  
 գտնել, դորա համար ասացի թէ խնձորի մէջ թոյն  
 կար:»

Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ո՛չ որ հաւատաց:  
 Մէկ փիլիսոփայից հարցրին թէ — Ստախօսը ի՞նչ  
 օգուտ ունի: «Պատասխանեց փիլիսոփայն — «Այն օգուտը,  
 որ ճշմարիտ խօսած ժաւնակիր ևս ո՛չ որ չի հաւատալ  
 նորան:

### Կիրակամուտ.

Իրիկնաժամի զանգակը տուին,  
 Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին,  
 «Ազգը կիրակէ՛ Աստուծոյ օրնէ,  
 Վերջացրէ՛ք զործերդ, հանգստեան ժամ է:»

Լսեց զիւզացին դաշտում այս ձայնը,  
 Դէպի տուն քշեց եզն ու դուրթանը:

Գիւլահան փոքրիկ պարզ եկեղեցին

Մարդիկը լցուած աղօթում էին,  
Արդար վաստակով գնած մեմերը,  
Աստեղը պէս պայծառ փայլփայլում էին:



### Մարդու ճանապարհը ցամաքի վերայ:

Ինչքան էլ վազելով ման գայ մարդս, էլի չէ կարող  
շատ ճանապարհ կտրել, — հեռու հեռու տեղեր գնալ:

Բայց էլ ի՞նչ օրուան համար էր խելք տուել Աստուած  
մտածեց, որ մի հնարք գտնէ նորա մէջքին նստելու:  
Յարմարացրեց թամբը, սանձն էլ դրաւ բերանը և նըս-  
տեց վերան, և երբ մի ծանր շալակ էլ ունեցաւ, այն  
ևս բեռնեց նորան:

Յետոյ մտածեց մարդը սայլեր շինել անիւներով և  
սահնակներ կոներով, և լծեց նորանց մէջ ձիուն:

Այնուհետև էլ յոգնելուց վախ չունէր մարդը, սկսեց  
նա օրը մինչև հարիւր վերաս ճանապարհ գնալ: Այսպէս  
ձիուն իրան ծառայացրեց:

Բայց դորանով չբաւականացաւ, նա հնազանդացրեց  
իւր կամքին հաստավեղ ուժեղ եղին, գոմէշին, համբե-  
րող և սակաւապէտ ուղտին և արագավազ եղջերուին:  
Բայց այս էլ քիչ էր. բարձրացաւ մարդը հսկայ փղի  
մէջքին, և ճանձի պէս նստելով նորա վերայ՝ թակում է  
մուրձով նորա գլուխը և քշում, որտեղ իւր սիրան է  
ուզում:

Մտածեց մարդը և տեսաւ, որ հաւասար ճանապարհի  
վերայով սայլի անիւները լաւ ու հեշտ են գլորվում,  
շինեց քարած հարթ ճանապարհներ ևս:



Երկաթուղի.

### Մարդու ճանապարհը առանց ձիերի:

Մարդը տեսնելով որ քարած ճանապարհների վերայ  
ձիով կամ կառքով բանը ծանր է գնում, սկսեց մի ուրիշ  
հնարք մտածել. շինեց երկաթուղի: Նա սարեր քանդո-  
տեց, դաշտեր հաւասարացրեց, կամուրջներ շինեց և գլուխ  
բերաւ մի աւելի հարթ հաւասար ճանապարհ:

Այդ ճանապարհի վերայով ձգեց զուգահեռաբար երկու գծերի պէս երկաթի գօտիններ, և գօտինների վերայ հաստատեց մի երկաթեայ մեքենայ, որ ունի սամփարի պէս ծխահան, կաթսայ և հոտց: Հոտցի մէջ փայտ է ածում կամ ածուխ, կաթսայի մէջ ջուր է եռայնում, և այդ եռ եկած ջրի շոգիովը կառքը այնպէս է քշում, որ ո՛չ մի ձի չէ կարող ետեկց հասնել:

Այդ շոգեկառքը օրէնը զնում է չորս—հինգ հարիւր վերստ երկաթի գօտինների վերայ զլորվելով, շովալով և ճչալով. նա դադարիլ չգիտէ, միայն տեղ տեղ իջեաններում ջրի կամ փայտի պաշար է վեր առնում և կրօկին ճանապարհ ընկնում: Նա քաշքաշ անելով զլորելով իւր քամակից կապած տանում է և ուրիշ շատ կառքեր, մէկի մէջ մարդիկ լցուած նայում են պատուհաններից դէս ու դէն, միւսի մէջ հազար ու մի տեսակ վաճառելի ապրանքներ:

**Անասուններն ու մարդը:**

Անտառի գաղանք սպառնում էր մարդուն: «Ձգո՛ւշ կաց, թէ չէ կրպատառեմ քեզ և ոսկորներդ կփշրտտեմ, կմեռնես:» Թուշունն ասաց, «Կթռչեմ բարձր օդի մէջ, ինձ մարդը ի՞նչպէս կարող է հասնել. նա թռեւեր չունի:» Չուկը ձայն տուեց, «Իսկ ես կընակվեմ ջրի մէջ, կմանեմ ջրի խոր տեղը. մարդն ՚ի հարկէ չի կարող ջրի մէջ

չունչ քաշել:» Որդնիկն էլ միւս կողմիցն ասաց. «Նա էլ կթագնուեմ հողի տակ, ինձ չեն տեսնիլ, բայց եթէ տեսնեն էլ, ես ում ինչե՞ն եմ պէտք:

Մարդը դուրս եկաւ տանից, վեր առաւ իւր հետ ցանցը, շունը, ծուղակը, ուռկանը և թխալը, — անտառի մէջ դաւա սպանեց զաղանիկն. ականատ զցեց, բռնեց թռչնակին, ուռկանով և կամ կարթով դուրս հանեց գետից կամ ծովից ձկանը, բահովն էլ կտրտեց խեղճ որդնիկին:



Առիւծ.

Ո՞վ կմենչայ. ո՞վ կթռչէ. ո՞վ կլողայ. կտղայ ի՞նչը. կհասէ ո՞վ: Իսկ կատուն... ձի՞ն... ա՛յծը... ոչխա՞րը... ե՞ղն... կո՞վը... ա՞րջը... է՞ջը... խո՞ղը... գո՞րտը... շո՞ւնը... կաշաղա՞կը... ագռա՞ւը... աղաւնի՞ն... հա՞ւը... մո՞ւկը. ճա՞նձը...

**Եւստ փուշը:**

Փշին հարցրին, «Ի՞նչ օգուտ ունիս, որ քարվանի բեռն մտովդ անցնելիս, ել բուրթ ու բամբակ չես հարցնում, քաշում ես պոկում, բեռը փուշացնում:»

— Օգո՞ւտն ի՞նչ կանեմ, պատասխան տուեց  
 Անիճած փուշն ու զլուխը ցցեց,  
 Օգուտ ուզողն օգուտ պիտի տայ,  
 Իմ՝ սրտուղեղիքն տե՛ս ի՞նչ է ահա՛.—  
 Հենց նորանով է սիրտս հովանում.  
 Որ այլոց տունը քանդում եմ կործանում:

**Մեղուն և ճանճերը:**

Երկու ճանճ մտաղիր էին հեռու երկիր գնալ իրանց  
 համար ապրուստ գտնելու: Գնացին մեղրաճանճի մօտ,  
 նորան էլ առաջարկեցին, որ իրանց հետ ընկեր լինի:  
 ))Այստեղ «ասացին նոքա, ))Մենք պատիւ չունինք, ուր  
 որ գնում ենք մեզ քշում փախցնում են և քաղցր կե-  
 րակուրները մեզանից թաղցնում. իսկ անգուլթ սար-  
 գերի ձեռքիցն էլ հանգստութիւն չունինք, մեր կեանքը  
 միշտ վտանգի մէջ է, գնա՛նք, մեղո՛ւ եղբայր, գնա՛նք, այն-  
 տեղ ասում են ամենները բախտաւոր են, մենք ևս բախ-  
 տաւոր կլինինք:

—))Աստուած բարի ճանապարհ տայ ձեզ «պատաս-  
 խանեց մեղուն, «Ես այստեղ էլ բախտաւոր եմ. ամե-  
 նեքեան թէ հարուստ և թէ աղքատ ինձ սիրում են և  
 պահպանում իմ տուած մեղրի և մոմի համար. իսկ  
 դուք, եղբայրներ, գնացէ՛ք ուր որ կամիք, ես ձեզ այս  
 կասեմ միայն, որտեղ որ գնալու լինիք պատիւ չէք

ստանալ, որովհետև ո՛չ մի բանի պէտքական չէք, միայն  
 սարգերը կուրախանան ձեզանով:




**Մարդու ճանապարհը ջրի վերայ:**

Մարդս ինչքան էլ լաւ սովորի լողալ, էլի գորսն ու  
 ձուկը նորանից լաւ կըլողան: Այս բանը երբ մտածեց  
 մարդը, և տեսաւ, որ բանը բուրթ է, խելքին ոյժ տալով  
 մեծ փայտի մէջը դուրս տուեց և շինեց իրա համար  
 մակոյկ. մակոյկի երկու կողքիցն էլ թիւն յարմարացնե-  
 լով սկսեց քշել ջրի երեսին:

Բայց նեղացաւ մարդը երկար ու ձիգ թիաւարելուց:  
 Հիմա էլ մտածեց մի ուրիշ հնարք. յանկարծ միտքն  
 ընկաւ թէ այս քամին ինչո՞ւ ՚իզուր անօգուտ դէս ու  
 դէն է վազվզում, ամպեր փախցնում, թող վերկացնում,  
 այլքներ բարձրացնում և ծովը կատաղեցնում: Լաւ չի՞  
 լինիլ, որ ես սորան մի դործի դնեմ:

Առաւ մարդս կտաւը. կարեց շինեց առապաստ և  
 պնդացրեց նորան նաւի կայմի վերայ. քամին էլ քշեց  
 ծովի երեսով փոքրիկ մակոյկն էլ, մեծ մեծ նաւերն էլ:

Վերջապէս քամուն էլ լծեց մարդը, բայց չունէր  
 այնպիսի մտրակ, որ քշեր նորան, ոչ սանձ, որ կանգնա-  
 ցնէ և ոչ կապեր, որ կարողանայ վարել:



### Չրի երեսին շոգենաւով:

Երկար ժամանակ առազատներով քշեց մարդս նաւերը. տեսաւ, որ քամին չի հնազանդում, իրան լաւ չէ ծառայում կամակոր և անհաւատարիմ ծառայի նման, երբ կամենում է, այն ժամանակն է անում բանը, երբեմն էլ այնքան է հակառակում, եթէ դու ուզում ես հարազանս, ինքն հիւսիս է քշում, կամ եթէ արեւելք ես գնում, դէպի արեւմուտք է տանում, և եթէ շատ խօսացնես, վերջումն էլ նաւդ այնպէս է շարտում, որ զլսի վերայ գալով՝ թաղում է Չրի մէջ քեզ քո ապրանքով:

Այս բաները մարդս անննելով՝ էլ աւելի յոյս չկապեց քամու ծառայութեանը. նա անխնի յարմարացրեց նաւի կողքերին, շինեց հնոց, ծխնելոյղ և կաթսայ նորա մէջ, ջուրը եռացրեց կաթսայումը, շոգիով սկսաւ լինչպէս իւր կամքն է պտտել ծովի երեսով և զնալ ապահով, ուր կամենում է այնպէս, ինչպէս ցամաքի վերայ:



### Փիլիսոփայն ու նաւավարը:

Մի փիլիսոփայ նաւ նստած մի գետի վերայով ճանապարհորդութիւն անելիս՝ հարցրեց նաւավարին «Թուաբանութիւն զիտե՞ս:— «Այդ բառը նոր եմ լսում.» ասաց նաւավարը:— «Ինչո՞ւ ցաւումեմ, որ համարեա թէ կեանքիդ քառորդն կորցրել ես.» ասաց փիլիսոփայն, և կրկին հարցրեց «Ինչպէ՞ս պատմութիւն զիտե՞ս.» — «Ոչ.» — «Ատեղարաշխութենից մի բան կհասկանա՞ս.» — «Ո՛չ.» պատասխանեց նաւավարը:— «Ուրեմն կեանքիդ կէսը կորած է.» ասաց փիլիսոփայն:

Այդ միջոցին մի սաստիկ փոթորիկ զցեց նաւը ժայռերի մէջ, այնպէս, որ ընկղմելու մօտ էր նաւն, նաւավարը խիոյն հանեց իրանից շորերն և ասաց փիլիսոփային. «Իբարեկամ, լողալ զիտե՞ք.» — «Ոչ.» — «Ուրեմն ավստ՞ս, որ բոլոր կեանքդ կորած է, պատճառ, նաւն ընկղմելու վերայ է:»

### Արծիւն ու անգղը.

Բարձր օդի միջով մի օր ճանապարհորդումէին արծիւն ու անգղը: Արծիւն պարծենալով իւր ազնուութեան, սրատեսութեան և քաջութեան վերայ՝ զովում էր իւր զլուխը:

Իսկ անգղը խոնարհութեամբ հարցրեց նորան «Ի՞նչ քանի՞ տարի կեանք կունենաք:» — «Մենք քսան տարի հազիւ թէ կապրենք.» պատասխանեց արծիւը:— «Իսկ դո՞ւք, անգղ եղբայր.» — «Մենք էլ հարիւր տարիներով կապրենք.» ասաց անգղը:

Մինչ անգղը ընդհատեց խօսքը, արծիւը տեսաւ մի ժայռի գլխում մի քարի տակ գուճ եկած մի կաքաւ, և յանկարծ կայծակի պէս վերայ տուեց, որ իւր սուր սուր մազիչներին զոհ անէ խղճուկ կաքաւին. կաքաւն էլ նետի պէս դուրս սլացաւ արծուի տակից. արծիւն այնպէս սաստիկ կպաւ քարին, որ իսկոյն շնչասպառ լինելով՝ մեռած մնաց ժայռի գլխին:

Անգղը տեսնելով արծուի վախճանը՝ ցած եկաւ նստեց նորա գլխին և սկսեց ողբալ այսպէս. վա՛յ, արծիւ եղբայր, այդ անհամբեր և բարկացոտ բնութիւնը որ ձերն է, քսան տարին էլ ձեզ համար շատ երկար կեանք է:

Ո՛վ մինչև վերջ կհամբերի, նա կապրի:  
 Բարկացող մարդը շուտ կպառաւի:

**Վարժատան երեխայ:**

Ես չեմ խաղում փողոցներում՝  
 Ի զուր օրս անցնելով,  
 Չար տղաներից չեմ սովորում,  
 Անկարգ խօսքեր լսելով:  
 Ես գնում եմ միշտ վարժատուն,  
 Ուսում առնելու համար,  
 Այնտեղ շատ կան խելօք, գիտուն  
 Երեխաներ անհամար:

**Մեզ ասում է վարժապետը—**

«Ուսումը շատ լաւ բան է,  
 Առանց ուսման ապրող մարդը՝  
 Անասունի պէս անբան է:»  
 Նա լաւ մարդ է, մենք սիրումենք,  
 Խրատները պահելով,  
 Մենք նորա հետ միշտ խօսումենք,  
 Մեր դասերը պատմելով:  
 Բայց ով մեր մէջ սուտ է խօսում,  
 Եւ չէ պատվում մեծերին,  
 Ո՛վ որ խրատներ չէ լսում,  
 Հետևում է չարերին,  
 Կամ թէ ով որ իւր հօրն ու մօր  
 Չէ հնազանդում, չէ՛ պատվում,  
 Եւ թէ իրանց տանն ամեն օր  
 Ո՛վ աղօթքներ չէ ասում,—  
 Կամ թէ մեր մէջ ով որ չար է,  
 Ունի բնութիւն կռուասէր,  
 Կամ ով անպարկեշտ յամառ է,  
 Եւ խօսում է լիրբ խօսքեր,  
 Վարժապետս իսկոյն նորան  
 Շուտ գցում է իւր աչքից,  
 Եւ չի թողնում զալ վարժարան,  
 Հեռացնում է մեր մէջից:  
 Այս պատճառով կամենումեմ  
 Սէր իմ վերայ գրաւել,  
 Ես միշտ արի հետևումեմ  
 Ամեն լաւ բան սովորել:



### ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

#### Հայկ.

Հայկը մեր պապն էր, Նոյի թոռան թոռն, այսինքն Նոյ ծնելէ Յաբէթին, Յաբէթը Գամբրին, Գամբըրը Թորգոմին, Թորգոմը Հայկին: Այդ Հայկը քաջասիրտ և խոհեմ մարդ էր: Սա չուզեց ուրիշներին մանն, հնազանդուիլ ամբարտաւան զուռղ Բէլին, որ ուզում էր իւր անձնը Աստուծոյ տեղ զնել ու պաշտել սար մարդկանց: Բէլը որքան համոզեց նորան, հնար չէլաւ, վերջապէս մեծ զօրքով կռիւ զուրս եկաւ Հայկի հետ: Հայկն էլ Աստուծոյն յուսալով՝ վեր առաւ իւր հետ մի քանի հարիւր քաջ մարդիկ և կռիւ արեց Բէլի հետ, այնպէս յաղթեց նորան, որ մինչև հիմա էլ գովում են ամեններն: Այդ յաղթութիւնից յետոյ հաստատեց իրա ազատ իշխանութիւնը. նորա անունովն էլ մենք Հայ ենք կոչվում, մեր երկիրն էլ Հայաստան:

Ով է Հայկը: Մենք ում անունովն են Հայ կոչվում. մեր երկիրն անունը ինչ է եւ հաւ անունովն է կոչվում:

#### Արամ.

Արամը մեր Հարմա նահապետի որդին էր, որ քաջութեամբ և լաւ խելքով կառավարեց մեր ազգին. նա յաղթեց մեր երկրի թշնամիներին: Նա շինել տուաւ Մաժակ քաղաքը Մշակ կուսակալի ձեռքով: Այժմ Մաժակին կոսարեայ կամ Ղայսերի են ասում: Նա հրամայեց Մշակին, որ իւր ձեռքի տակ հպատակներին հայերէն խօսել ստայ:

Ի՞նչ է նահապետ բառի միտքը: Ով է Արամը, Մշակը. ինչ է Մաժակը:

#### Աբգար.

Աբգարը Արշամայ որդին էր, Հայոց թագաւոր: Նորա աթուռը եղեսեա քաղաքումն էր: Նա լսելով Քրիստոսի հրաշագործութիւնները հաւատաց Նորա Աստուծութեանը և նամակ գրեց Նորան թէ յո՞ւ հաւատում եմ, որ դու կամ Աստուած ես, կամ Աստուծոյ որդի, որ այդ հրաշքներն անում ես: «Քրիստոսն էլ նորա պատասխանը գրեց, իւր անձեռագործ պատկերն էլ նորա համար ուղարկեց:

Քրիստոսի համբարձումից յետոյ Աբգարը իւր ընտանիքով մկրտուեցաւ Քաղէոս Առաքեալի ձեռքով, որ եղաւ առաջին քրիստոնէայ թագաւոր. նա Աբգարը քրիստոնէութիւնը տարածելու համար շատ հոգս էր անում աշխարհի:

տում էր, բայց ավստ'ս. որ մահը թոյլ չտուաւ նորան հասնելու իւր նպատակին:

Աբգարի մեռնելոց յետոյ՝ Սանատրուկ թագաւորը՝ որ Աբգարի քրոջ որդին էր, Քրիստոնէական հաւատը թողնելով ընդունեց կռապաշտութիւնը և նահատակել տուաւ իւր հարազատ աղջկանը՝ Սանդուխտ կուսին Յադէոս Առաքելու հետ միասին Քրիստոնէական հաւատի համար:

### Աբգարի նամակը Քրիստոսին.

«Աբգար Արշամեան աշխարհի իշխան բարերար Փրկիչ Յիսուսին, որ երևեցար Նրուսադէմացոց աշխարհին, ողջոյն:

«Ես լսելեմ Քեզ և Քո բժշկութեանդ համար, որ լի նում են առանց դեղերի և արմատների. ինչպէս ասում են, Դու կուրերին աչք ես տալիս տեսնելու, կաղերին ոտք զնալու. բորոտներին սրբումես. պիղծ դեւերին հանում ես, և նորանց, որոնք երկար ժամանակ հիւանդութեան մէջ չարչարվում են, բժշկում ես. դու մեռածներին անգամ կենդանացնում ես: Ես երբ լսեցի այս ամենը Քեզ համար, մտքումս դրի այս երկուսից մէկը — կամ Դու Աստուած ես երկնքից իջած, կամ թէ Աստուծոյ որդին ես, որ այդ անում ես:

«Վասնորոյ զրեցի արդէն Քեզ և աղաչում եմ, որ աշխատես զաս իմ մօտ և բժշկես իմ հիւանդութիւնները: Նա և լսեցի, որ հրէաները զանգատում են Քո վերայ և կամենում են չարչարել Քեզ. ես մի փոքրիկ և զեղեցիկ քաղաք ունիմ, ե՛կ, նա բաւական է մեզ երկուսներիս:»

### Աբգարի նամակին պատասխանը, որ զրեց թումաս Առաքեալը Փրկչի հրամանով:

«Նորանի՛ նորան, որ ինձ չտեսած կհաւատայ, որովհետև զրուած է թէ՛: Որոնք տեսնում են ինձ, չեն հաւատալ ինձ, խոյ նոքա, որոնք չեն տեսնում, կհաւատան և կապրին: Բայց իմ գալու մասին քո մօտ, որ զրեցիր, ես չեմ կարող զալ, պատճառ, պէտքէ կատարեմ այն ամենը, ինչի համար որ ուղարկված եմ: Եւ երբ կկատարեմ այս, յետոյ կբարձրանամ Նորա մօտ, որ ուղարկեց ինձ, և երբ կբարձրանամ, կուղարկեմ իմ աշակերտներից մէկին, որ կգայ կբժշկէ քո ցաւերը և կշնորհէ կեանք քեզ և նորանց, որ քեզ հետ են:»

### Աբգարի նամակը Տիբերիոսին.

«Աբգար Հայոց թագաւոր, իմ Տէր Տիբերիոս Կայսեր Հռովմայեցոց ողջոյն:

«Ես զիտեմ, որ ծածուկ բան չկայ քո թագաւորութիւնիցդ, բայց իբրև քո մտերիմը լինելով՝ կամենում

եմ աւելի ծանուցանել զրովս: Հրէաները՝ որոնք բնա-  
կուած են Պաղեստինացւոց զաւառներումը, հաւաքվելով  
խաչեցին Քրիստոսին անմեղ տեղից այն մեծ երախտեաց  
փոխարէն, որ Նա արաւ իրանց, նշաններ և հրաշքներ և  
մինչև անգամ մեռածներին վեր կացրեց: Կմայի՛ր, որ այս  
զօրութիւնները միայն մարդոց զօրութիւններ չէ, այլ  
Աստուծոյ, որովհետև այն ժամանակ երբ խաչեցին Նորան,  
արեգակն խաւարեցաւ, երկիրը շարժելով տատանուեց,  
ինքն էլ երրորդ օրում յարութիւն առաւ մեռեալների  
միջեց և երևեց շատերին:

Այժմ Նորա անունով ամենայն տեղ նորա աշակերտ-  
ների ձեռքով մեծ մեծ հրաշքներ է լինում, ինչպէս  
էլաւ իմ վերաս յայտնի կերպով: Ուրեմն այսուհետև  
Տէրութիւնդ է իմանում ինչ որ արժանն է անել Հրէից  
Ժողովրդեան, որ այդ բանը գործեցին. զրի՛ր և հրամա-  
յի՛ր ամենայն տեղ, որ երկիրպագանն Քրիստոսին, իբրև  
Ճշմարիտ Աստուծոյն: Ո՛ղջ լեր:՝

**Արգարի նամակին պատասխանը, որ գը-  
րում է Տիբերիոսը:**

»Տիբերիոս, Հռովմայեցւոց Կայսր, Հայոց Արգար Թա-  
գաւորին ողջոյն:

»Քո մտերմութեան նամակը կարդացի, որի համար  
չնորհակալ եմ: Թէպէտ մենք շատերից լսելնք այդ սուա-

ջոց, ինչպէս և Պիղատոսը Ճշմարտապէս յայտնեց Նորա  
նշանների և յարութիւնից յետոյ շատերին երևալուն  
համար, թէ Նա Աստուած է: Վասնորոյ և ես կամեցայ  
անել այդ, որը դու մտածեցիր, բայց որովհետև սովո-  
րութիւն է Հռովմայեցւոց մէջ Աստուած չկանգնացնել  
միայն Թագաւորի հրամանով, մինչև որ փորձելով քննուի  
այն Սինոզից, ուստի ես այդ բանը յայտնեցի Սինոզին. նա  
մերժեց, թէ այդ առաջուց քննուած չէ Սինոզի ձեռքով:

Բայց մենք հրամայեցինք, որ ամենայն տեղ, ում հա-  
ճոյ լինի Յիսուսը, ընդունի նորան Աստուծոյ տեղ. և  
մահ խոստացանք նորանց, որոնք կշարախօսեն քրիստո-  
նեաների վերայ:

Իսկ Հրէից Ժողովրդեան համար, որ համարձակեցան  
խաչել նորան, որի համար լսել եմ, որ խաչի և մահու  
արժանի չէր նա, այլ պատուի և երկրպագութեան, երբ  
որ յետ կղառնամ ինձանից ապստամբուած Սպանիացւոց  
դէմ պատերազմից, կքննեմ և կհատուցանեմ ինչ որ  
արժանն է:՝

**Արգարը կրկին գրում է Տիբերիոսին:**

»Արգար Հայոց Թագաւոր, իմ ձեր Տիբերիոսին Հռով-  
մայեցւոց Կայսր ողջոյն:

»Քո Տէրութեանդ արժանի գրած նամակը կարդացի, և  
քո մտածած հրամանիդ վերայ ուրախացայ: Եթէ ընե-

դանաս իմ վերայ, Սինսօլիզ գործը այսպանելի է, որովհետեւ  
տե գոցա կարծիքով, մարդիկ պէտք է քննեն և Աստուածու-  
թիւնն հաստատեն, ուրեմն և եթէ հաճոյ չլինի Աս-  
տուածը մարդուն, նա Աստուած լինիլ չէ կարող, ուրեմն  
և մարդը պէտք է քաւէ Աստուծոյն:

Իսկ դու, տէ՛ր իմ, խնդրեմ ուղարկել Պիղատոսի փո-  
խանակ մի ուրիշը. թող նա անարդանքով ղրկուի այն  
իշխանութիւնից, որի մէջ կարգել ես նորան, պատճառ,  
նա կատարեց Հրէաների կամքը և խաչեց Քրիստոսին  
'ի զուր տեղից առանց Քո հրամանի: Քո ողջ լինիլն եմ  
ցանկանում:“

**Աբղարի նամակը Ասորէստանի Ներսէհ թա-  
գաւորին:**

„Աբղար Հայոց թագաւոր, իմ որդի Ներսէհին ողջոյն:“

„Քո ողջունի զիրը կարգացի, Պերողին էլ բանտից  
արձակեցի, նորա յանցանքն էլ բաշխեցի, և եթէ կամե-  
նաս, կարող ես կարգել նորան Նինուէի վերակացութեան  
պաշտօնումը, ինչպէս քո կամքն է:

Բայց նորա համար, որ գրել ես ինձ թէ „Ուղարկի՛ր այն  
բժիշկ մարդուն, որ հրաշքներ է անում և քարոզում է  
ջրից և կրակից վերեւ մի այլ բարձր Աստուած, որ տես-  
նեմ նորան.“ նա մարդկան արհեստի բժիշկ չէ. Աստու-  
ծոյ որդւոյն աշակերտ է. Աստուծոյն, որ կրակի և ջրոյ

Աբարիչն է, նա արդէն այստեղ չէ, գնացել է Հայոց կող-  
մերը: Բայց նորա գլխաւոր ընկերներից մէկը Սիմոնն անու-  
նով զտանվում է Պարսից կողմերումը, կգտնես նորան և  
կլսես ինչպէս և քո հայր Արտաշէսը: Նա կբժշկէ ամե-  
նայն հիւանդութիւններ և կեանքի ճանապարհ ցոյց  
կտայ:“

**Աբղարի նամակը Արտաշէսին:**

„Աբղար Հայոց թագաւոր, իմ Արտաշէս եղբօրը՝  
Պարսից թագաւորին ողջոյն:“

„Գիտեմ, որ դու ևս լսած կլինես Յիսուսի Աստուծոյ  
որդւոյն համար, որին խաչեցին հրէայքն, որ և յարու-  
թիւն առաւ մեռեալների միջից և ուղարկեց իւր աշա-  
կերտներին ամենայն աշխարհ, որ ուսուցանեն ընդհան-  
րապէս:

Նորա գլխաւոր աշակերտներից մէկն էլ Սիմոնն անու-  
նով քո Տէրութեանդ կողմերումն է. հարց ու փո՛րձ արա  
և զտի՛ր նորան, նա կբժշկէ ամեն տեսակ հիւանդութիւն-  
ներ, որ կլինին Ձեզանում. նա կեանքի ճանապարհ ցոյց  
կտայ, կհաւատաս նորա խօսքին դու և քո եղբայրներդ  
և ամենները, որոնք կամաւ հնազանդում են քեզ, որով-  
հետեւ ցանկալի է ինձ, որ ինչպէս դուք մարմնով ազգա-  
կան էք ինձ, լինիք մտերիմ և հարազատ նոյնպէս ըստ  
հոգւոյ:“

Դեռ այս նամակներին պատասխանները չտուցած մեռնումէ՛ Սբգարը երեսուն և ութ տարի թագաւորութիւն անելուց յետ:

**Հեղինէ.**

Հեղինէն Սբգար թագաւորի կինն էր, որ Սբգարի մահից յետոյ գնաց Երուսաղէմ, և որովհետեւ այդ ժամանակ այնտեղ սով կար, շատ ցորեան գնեց և բաժանեց աղքատներին, ինքն էլ այն տեղ վախճանուեցաւ և թաղուեցաւ, ինչպէս գրումէ Հրէից Յովսէպոս պատմագիրը:

**Գրիգոր Լուսաւորիչ:**

Գրիգոր Լուսաւորիչը Անակի որդին էր, որին իւր հօր մահից յետոյ զեռ փոքրիկ հասակում տարին Կեսարեա և տուն այնտեղ ուսումնարան. նա լաւ կարդաց և սովորեց քրիստոնէական հաւատոյ բոլոր զխտելիքը և եղաւ կատարեալ քրիստոնեայ:

Յետոյ գնաց Հայոց Խոսրով թագաւորի որդոյն՝ Տրդատին ծառայելու Հռոմում, բայց երբ Տրդատը Հռոմից վերադարձաւ և նստեց թագաւոր իւր հօր աթոռի վերայ, հրամայեց Գրիգորին, որ պաշտէ Անահիտ կուռքը և գնէ նորա զլիւն ծաղիկ պսակ. Գրիգորը յայանելով թէ ես քրիստոնեայ եմ, չկատարեց թագաւորի հրամանը:

Տրդատն էլ նորան տաներկաւ տեսակ սաստիկ շարժարանք տալուց յետ՝ զցել տուաւ Սրտաշատ քաղաքի խոր վերապի մէջ, որ մահապարտների տեղ էր օձերով լըլը. նա մնաց այն տեղ տասն և հինգ տարի. նորան ծածուկ կերակրում էր մի պառաւ կին: Երբ դուրս եկաւ վերապից, մկրտեց Տրդատին և նորա նախարարներին. այսպէս մեր Ազգը լուսաւորեց քրիստոնեայ շինելով երեք հարիւր տարի Քրիստոսից յետոյ:

**Վաղարշապատ:**

Վաղարշապատը Հայոց երևելի քաղաքներից մէկն էր հին ժամանակում: Յառաջ Արտէմէոս քաղաք էր կոչվում, յետոյ Վարդգիսի աւան կոչվեցաւ: Հայոց Վաղարշ թագաւորը նորան նորոգելով՝ անուանեց իրա անունով Վաղարշապատ:

Այժմ Հայոց Վաթուղիկոսական աթոռը այն տեղ է, որ է սուրբ Եջմիածին, որ շինուեցաւ Տրդատ թագաւորի և Գրիգոր Լուսաւորի ժամանակ Քրիստոսի երեք հարիւր երեք թուականում:

**Ազաթանգեղոս:**

Ազաթանգեղոսը Հռովմայեցի էր, Տրդատ թագաւորի էլ ատենադպիրը: Սա Տրդատի հրամանով գրեց Գրիգոր Լուսաւորի կրած չարաբանքը: Գրքի անունն էլ իւր անունով կոչվումէ Ազաթանգեղոս:





### Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր:

Մէկ անգամ Յիսուսի աշակերտներից մէկը ամեն աշակերտների կողմից խնդրեց Յիսուսին, որ իրանց աղօթք տովորացնէ. Յիսուսն էլ ասաց, երբ որ աղօթքի կանգնէք, ասացէք:—

„Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, եղեցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազօրդ տո՛ւր մեզ այսօր, և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ վրկեա՛ զմեզ ՚ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

### „Հայր մեր“-ի աշխարհաբառը:

Մեր Հայր, որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի քո արքայութիւնը զայս քո կամքդ լինի ինչպէս

երկնքումն, այնպէս էլ երկրիս վերայ: Մեր օրական հացը տո՛ւր մեզ այսօր և մեր պարտքերը թո՛ղ մեզ, ինչպէս և մենք թողումենք մեր պարտականներին, և մեզ փորձանքի մէջ մի՛ քցիր, բայց մեզ չարիցն ազատիր, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը և զօրութիւնը և փառք յաւիտեանս. ամէն:

### Աղօթք դասից յառաջ:

Ո՛վ ամենաբարի Տէր, ուղարկի՛ր դէպի մեզ քո սուրբ Հոգւոյդ շնորհքը, որ մեզ միտք պարզէ, և զօրացնէ մեր հողէօր կարողութիւնները, որպէս զի, մենք ուշք դարձնելով քո շնորհքիդ ուսմունքին՝ մեծանանք քեզ Ստեղծողիդ փառք տալու՝ և՛ օգուտ եկեղեցւոյ և՛ հայրենեաց. ամէն:

### Աղօթք դասից յետոյ:

Շնորհակալ ենք քեզանից, Տէր Աստուած մեր, որ արժանացրիր մեզ քո շնորհքիդ ուսմունքին. օրհնի՛ր մեր մեծաւորներին, մեր ծնօղներին և մեր ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներ իմանալու: Տո՛ւր մեզ զօրութիւն և կարողութիւն, որ զարգանանք օգտաւէտ ուսմունքի մէջ. ամէն:

**Առաւօտեան աղօթք:**

Ո՛վ ամենակալ Աստուած, դու որ առաւօտեան լոյսը ծագեցիր քո արարածների վերայ, ծագի՛ր այժմ քո առատ ողորմութիւնը քո սուրբ անունդ փառարանողների վերայ:

Քո լուսովը, ո՛վ Քրիստոս, մենք ամեններս լուսաւորվեցանք, և քո սուրբ խաչիդ, ո՛վ Քրիկիչ, մենք հաւատացեալներս յոյս կապեցինք: Լսի՛ր մեզ, մեր Քրիկի՛չ Աստուծ, և տո՛ւր մեզ քո խաղաղութիւնը և ողորմի՛ր մեզ մարդասէ՛ր Աստուած:

**Երեկոյեան աղօթք:**

Տէ՛ր Աստուած մեր, դու պահի՛ր մեզ խաղաղութիւնով այս գիշերը և ամեն ժամանակ. քո սուրբ երկիւղիդ մէջ պահի՛ր մեր միտքը և խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ և ազատ լինինք թշնամու որոգայթից. քեզ փառք յախտեանս. ամէն:

Ո՛վ ամենախնամ Տէր, պահապան դիր իմ աչքին քո սուրբ երկիւղը, որ ծուռ չի նայեմ. իմ ականջներին, որ չցանկանամ լսել չարութեան խօսքեր. իմ բերանին, որ չխօսիմ ստութիւն. իմ սրտին, որ չմտածեմ չարութիւն.

իմ ձեռքերին, որ չղործեմ անիրաւութիւն. իմ ոտքերին, որ չգնամ անօրէնութեան ճանապարհով. այլ ուղղի՛ր սոցա ամեն մի շարժումն, որ լինի ամեն բանում քո պատուիրանքների համաձայն:

Ամեններին պահապան Քրիստոս, քո աջ ձեռնը հովանի լինի իմ վերաս գիշեր ու ցերեկ, թէ տան նստած ժամանակ, թէ ճանապարհ գնալիս, թէ քնելու և թէ վեր կենալու ժամանակ, որ ամենեին երկիւղ չունենամ. ողորմի՛ր քո ստեղծուածներին և ինձ:

Ո՛վ իմ Աստուած, որ բաց ես անում քո ձեռքը և լիացնում ես քո արարածներիդ քո ողորմութիւնովը, քե՛զ եմ յանձնում իմ անձնս. դու հոգա՛ և պատրաստի՛ր իմ հոգւոյ և մարմնոյ հարկաւորութիւնները այսուհետեւ մինչև յախտեան:

**Աղօթք ճաշից առաջ.**

Ամենքի աչքը դէպի քեզ են նայում, Տէ՛ր Աստուած մեր, դու ես տալիս նորանց կերակուր ժամանակին. բաց ես անում քո ձեռքը և լիացնում ես քո ամեն արարածներիդ քո ողորմութեամբը: Ազատեմ ենք քեզ, պարգևի՛ր մեզ ուրախութեան կերակուր և լցրու մեր սիրտը երկնային ուրախութիւնով:



**Ճաշից յետոյ:**

Շնորհակալ ենք քեզանից, Տէ՛ր Աստուած մեր, որ մեզ կերակրեցեր և լիացրիր. Քեզ փառք յախտեանս: ամէն:

**Ուսանողների աղօթք:**

Երկբլ երկրի արարիչ Աստուած, Ներ մեր աղօթք ջերմ սրտից բղխած, զոհ ենք քո շնորհքից, որ պարգևեցիր

Տկար մանկանցս քո գութ սիրալիր:

Առատ արիր մեզ ձիրքդ Հայրական,

Տուիր ողի, խելք ու միտք բանական,

Որ մենք շինանք ինչպէս անասուն,

Այլ որ ուսանինք դառնանք բանիբուն:

Ո՛հ, ի՞նչպէս ապա, Հայր մեր երկնաւոր,

Թողունք մոռանանք մենք քո սուրբ շնորհ,

Եւ գիշեր ցերեկ ջանքով եռանդնոս

Չաշխատենք լցնել մեր ուսման կարոս,

Որ հոգիներիս չտիրէ խաւար,

Այլ որ նա փայլի լուսով կենարար:

Հա՛, աղաչում ենք, Հայր մեր զթաւատ,

Պարգևի՛ր մեզ ոյժ ու սէր անարատ,

Եւ մենք պատրաստ ենք տալ ջանքեր անթիւ:

Սուրբ ուսման համար, իսկ Քեզ փառք պատիւ

Վայելէ այժմ և միշտ յաւիտեան,

Թո՛ղ օրհնէ անունդ աշխարհ ամենայն:

**Աղօթք թաղաւորի համար:**

Տէ՛ր Աստուած մեր, անփորձ և անսասան պահիր ամենաբարեպաշտ և ինքնակալ կայերն ամենայն Ռուսաց՝ ԱՆԻՔՍՏՆԻՐ ՆԻԿՈՒԱՅԵՎՉԻՆ. զօրացրու՛ր Նորան, օգնիր Նորա ժառանգներին և Նորա զօրքին պահելով խաղաղութեան մէջ:

**Աղօթք մեր հոգևոր Հայրապետի և Առաջնորդաց համար:**

Տէ՛ր Աստուած մեր, պահիր մեր հոգևոր Հայրապետին, մեր ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ և մեր Առաջնորդներին. տուր բանց հոգեկան զօրութիւն և կարողութիւն, որ նոքա կարողանան հոգալ մեր մտաւոր և հոգեկան կրթութեան և մեր կեղեցիների պայծառութեան համար. ամէն:

**ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ:**

**Առարկայական և քերականական կրթութիւններ:**

Առարկաների զոյնը.— Ի՞նչն է լինում կարմիր, կանա՞ց, դեղն, սև, սպիտակ, կապոյտ, մոխրագոյն: Ի՞նչ զոյնի է լինում մահողը, բո՞ւրթը, բամբակը, վարդը, մարդու աչքերը, մազերը և այլն:

Առարկաների ձևը.— Ի՞նչն է կոյր, տափակ, նե՞ղ, լայն, կարճ, հաստ, բարակ, ուղիղ, ծո՞ւռ, մե՞ծ, փոքր կո՞շտ, կակո՞ւղ, սո՞ւր, բո՞ւթ, կո՞ր (կեռ) և այլն:

Առարկաների ծանրութիւնը, պնդութիւնը և համր.— Ի՞նչն է քաղցր, թթու, դա՞ռն, կծո՞ւ, այրո՞ղ, տափաքանդ, ծա՞նր, թեթե՞ւ, պի՞նդ, փափո՞ւկ, հեղո՞ւկ թա՞նձր, նո՞սր, դիւրաբե՞կ, ջե՞լ, փխրո՞ւն և այլն:

Թուղթը ի՞նչպէս է լինում ձևի, զոյնի, պնդութեան և ծանրութեան կողմանէ. խնձորը, հացը, վարունգը, սեխը, ձմերուկը, թէ՛յը, սո՞ւրձը, շաքարը, պղպե՛ղը, (բիրարը տաքտեղը) կո՞ծապղպե՛ղը (զանջա՛խիլ) կինամո՞նր (զարջինը) բնկո՞յլը, շաղանակը (շամբալուտը) քրքո՞ւմը (զաֆարան), թանաքը, քանո՞նր, մատիտը, քարետախտակը, քարեգրի՛չը, գրի՛չը, զանակը, կացի՛նը, սղո՞ցը (մաշառը) գասկը (գլխարկը), չուխա՞ն, դօտի՞ն, մատանի՞ն

կոշիկը, արծաթը, ոսկի՞ն, հո՞ղը, ջո՞ւրը, օ՞ղը, հո՞ւրը (կրակը) մարդը, անասունը, թռչո՞ւնը, դաղա՞նը, միջատեանը, սողունները, վարդը, մանուշակը և այլն:

**Քերականական:**

Առարկայ ինչի՞ն են ասում:—

Առարկայ ասում են այն բանին, որ կամ աչքով կարելի է տեսնել կամ ձեռքով կարելի է շոշափել, կամ մտքով կարելի է ըմբռնել, ինչպէս քարը, թուղթը, խնձորը, հացը, ջուրը, գիրքը, մարդը, հողին, անասունը, թռչունը, սողունը և այլն:

Առարկաները քանիսի՞ են բաժանվում:—

Առարկաները երկուսի են բաժանվում.— նիւթաւոր կամ տեսական, մտաւոր կամ վերացական:

Ո՞ր առարկաներն են նիւթաւոր և ո՞րը մտաւոր:—

Նիւթաւոր կամ տեսական այն առարկաներն են, որոնց կարելի է տեսնել աչքով, կամ շոշափել ձեռքով. ինչպէս— մարդը, հացը, աղը, փայտը, անասունը, արեգակը, լուսինը, աստեղները և այլն:

Իսկ մտաւոր, որոնց աչքով չէ կարելի տեսնել, ձեռքով էլ չէ կարելի շոշափել, զորօրինակ— Աստուած, հողի, հրեշտակ, խօսք, մտք, և այլն:

Նիւթաւոր կամ տեսական առարկաները լինում են շնչաւոր և անշունչ: Շնչաւորները նոքա են, որոնք շունչ ունին, կենդանի են, որոնք իրանք իրանց ազատ կամքով կարող են շարժիլ մանզալ. ինչպէս — մարդը, անասունը, թռչունը, սողունը, և այլն:

Իսկ անշունչ առարկաները նոքա են, որոնք շունչ չունին, կենդանի չեն, որոնց եթէ մէկ տեղ դնելու լինիս, եթէ վեր չառնես տեղից, այնպէս էլ կմնան միշտ. ինչպէս — քարը, մատիտը, փայտը, թուղթը, գրիչը, և այլն:

Առարկաների սեռը չորսի է բաժանվում. — արու, էգ, հասարակ և չեզոք. կամ արական, իգական, հասարակ և չեզոքական:

Արակաները նոքա են, որոնք արուի նշանակութիւն ունին. ինչպէս — տղամարդը, հայրը, եղբայրը, հօրեղբայրը, քեռի, աշակերտ, աքաղաղ, եգն, խոյ և այլն:

Իգականը — մայր, քոյր, հօրաքոյր աղջիկ, աշակերտուհի, կով, մաքի, մարի, և այլն:

Հասարակ այն սեռն է, որ կարող է լինիլ կամ արու կամ էգ, զորօրինակ — մարդ, ձի, ոչխար, արջ, կատու, թռչուն, ծնձղուկ, սոխակ և այլն:

Չեզոք սեռին են պատկանում բոլոր անշունչ առարկաները, զորօրինակ թուղթը, գրիչը, քարը, փայտը, հող, ջուր, երկաթ, և այլն:

Առարկաները որովհետև գոյութիւն ունին, գոյացած են, կոչվում են և գոյական անուն:

Գոյական անունները բաժանվում են երեքի. — Յատուկ հասարակ և հաւաքական:

Յատուկ են մարդի, աղջկայ, տղայի, քաղաքի, սարի, ծովի, գետի, տեղի և երկրի անունները. ինչպէս — Պետրոս, Եղիսաբէթ, Արշակ, Աստրախան, Բագու, Շամախի, Թիֆլիս, Գանձակ, Ղուբայ, Գարբանդ, Նուխի, Արարատ, Կուր, Արաքս, Վոլգայ, Կասպիա. և այլն:

Հասարակ գոյականներ — մարդ, աղջիկ, տղայ, քաղաք, գետ, և այլն, որոնց եթէ անունները տաս, անունները յատուկ գոյականներ են:

Հաւաքական այն գոյականներն են, որոնք միատեսակ առարկաներ են մի տեղ հաւաքուած, ինչպէս հօտ, ժողովուրդ, զօրք, բանակ, երամ, պարք մեղուաց, զանձ, անտառ, և այլն:

Դերանուն. — Բաց ՚ի առարկաներից կան և այնպիսի բառեր, որոնք առարկայի տեղ են գործ ածվում, զորօրինակ — ես, դու, նա, սա, դա, իմ, քո, մեր, ձեր, իւր, սորա, դորա, նորա, ինձանից, քեզանից, նորանից, և այլն, այսպիսի բառերն կոչվում են դերանուն, այսինքն անունի կամ առարկայի տեղ գրուած բառեր:

**Ածական անուններ:**— Այն բառերը որոնք առարկայի որպիսութիւնն են յայտնում, կոչվում են ածական անուն, զորօրինակ մեծ, փոքր, լայն, նեղ, սև, սպիտակ, քաղցր, դառն, և այլն: Այդպիսի բառերը գրվում են առարկաների մօտ նորանց որպիսութիւնը յայտնելու համար, զորօրինակ ձի տուն, փոքր մարդ, լայն փողոց, նեղ ճանապարհ, սև թուղթ, սպիտակ ջուր, աստիճան վարունգ (խիար). և այլն:

**Թուական անուններ:**—Այն բառերը, որոնք առարկայի մօտ դրուելով, առարկայի թիւը կամ որքանութիւնն են յայտնում, կոչվում են թուական անուն. ինչպէս, մի, երկու, տասն, քսան, հարիւր, հազար, միլիոն, և այլն: զորօրինակ—Ձի քանոն, երկու խնձոր, աստիճան զրիչ, աստիճան մատիտ, հարիւր ոչխար, հազար հողի, միլիոն մարդ, և այլն:

**Բայ:**—Առարկայի արած կամ կրած գործողութեանը ասում են բայ, զորօրինակ—գրել, կարդալ, նստել, խօսիլ, գրեցի, կարդացի, կգրեմ, կկարդամ, կխօսիմ, գրելու եմ, գրելու ես, գրելու է. և այլն:

**Թիւ:**—Առարկաների կամ գոյական անունների, դերանունների, ածական անունների, թուական անունների և բայի թիւը երկու են—եզակի և յոգնակի:

**Եզակին մի հատի նշանակութիւն ունի,** ինչպէս—քար, մարդ, թռչուն, ծառ, ես, դու, նա, մեծ, մի, գրեցի, կարդացի, և այլն:

**Յոգնակին շատի նշանակութիւն ունի—**զորօրինակ—քարեր, մարդիկ, թռչուններ, ծառեր, մեք, դուք, նոքա, մեծեր, երկու, երեք, գրեցինք, կարդացինք, խօսելու ենք, կարդալու ենք. և այլն:


**Բառերը ձևով լինում են—**պարզ, բարդ և բաղադրեալ:

**Պարզ է այն բառը, երբ չունի իւր հետ միացած մի ուրիշ նշանական բառ, զորօրինակ հաց, մարդ, ճշմարիտ, գնալ, բախտ, և այլն:**

**Բարդ է այն բառը, երբ միացած ունի իւր հետ մի ուրիշ նշանական բառ, զորօրինակ — հացագործ կամ հացթօխ, մարդասէր, ճշմարտասէր և այլն:**

**Բաղադրեալ է այն բառը, երբ իւր սկզբից ունի անկամ շ, կամ փ, կամ փ, կամ փ, կամ փ, աննշան մասնիկները, որոնցով մի և նոյն բառերի առաջին նշանակութեան հակառակն է յայտնում, զորօրինակ անհաց, անհող, շգնալ, փմարդի, փքբախտ, փտերախտ, և այլն:**

Ինչ է առարկայն: Առարկաները քանիսի են բաժանվում. ինչ անուն ունի առարկայն. ինչ սեռ ունին առարկաները. ինչպիսի գոյական: Առարկաների տեղ դրուած բառերը. ածական անունները. Թուական անունները. բայը. եզակին, յոգնակին. պարզ, բարդ և բաղադրեալ բառերը:



# Ե Ր Ք Ե Ր

Չար մարդիկ երգ չունին:  
Շիւներ-

Սիրտդ բաց նորանց,  
Ով երգէ երգում,  
Երգը չար մարդկանց  
Չի զուարճացնում:

Բեստէն:

## Օրօրոցի երգ:

Քո՛ւն եղիր, բա՛լաս, աչքդ խո՛ւփ արա,  
Նախշուն աչքերուդ քուն թող դայ վերայ,  
Օր օր օր բալաս, օր օր ու նանի,  
Խմ՝ (Արսէնին) քունը կտանի:

Ոսկի խաչ վիզիդ քեզի պահապան,  
Նարօտ կապելէ ծայրէն Տէր պապան,  
Օր օր օր բալաս, օր օր ու նանի,  
Խմ՝ (Արսէնին) քունը կտանի:

Մաւի հելուններ կախելեմ ես ալ,  
Նաղար չես առնուլ, քո՛ւն եղիր, մի՛ լար:  
Օր օր օր բալաս, օր օր ու նանի:  
Խմ՝ (Արսէնի) քունը կտանի:

Այս քանի՞ մօրդ անքուն աչքովը,  
Անցել են օրեր օրօցքիդ քովը,  
Օր օր օր բալաս օր օր ու նանի,  
Խմ՝ (Արսէնին) քունը կտանի:

Օրօցքդ օրբեմ, օրով բոյ քաշես,  
Մղկտան ձայնով սիրտս չի մաշես,  
Օր օր օր բալաս, օր օր ու նանի,  
Խմ՝ (Արսէնին) քունը կտանի:

Դու էլ քուն եղիր, ինձի էլ քո՛ւն տուր,  
Սուրբ Աստուածամայր (Արսէնին) քո՛ւն տուր  
Օր օր օր բալաս, օր օր ու նանի,  
Խմ՝ (Արսէնին) քունը կտանի:

## Մայրենի լեզու:

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,  
Ախորժ ընտանի իմ հօգու համար,  
Առաջին դու խօսք, ականջիս հասած,  
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօղուած,  
Մանկական լեզուիս թո՛թովանք տկար  
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,  
 Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու,  
 Կամիմ աւելի քաջ ծանօթանալ,  
 Քո ձոխ զանձերին, հոգւով հայանալ,  
 Ասես թէ ահա՛ կանչում էին ինձ,  
 Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչի՛ր դու հնչի՛ր այժմ և յաւիտեան  
 Մայրենի՛ լեզու, բարբա՛ռ սիրական,  
 Արի՛ բարձրացի՛ր հնութեան փոշուց,  
 Գու իմ հայ լեզու մոռացած վաղուց,  
 Զգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուածներով,  
 Որ ամենայն սիրտ վառվի քո սիրով:

Ամենայն տեղ փչում է Աստուծոյ շունքը,  
 Սուրբ է այո՛ միւս, այլ ձև ու ոճը,  
 Բայց թէ աղօթել, զոհանալ պէտք էր,  
 Իմ սրտի սէրը յայտնել արժան էր -  
 Իմ՛ երանական մտածութիւնքը,  
 Ապա կիսուեմ իմ մօրս խօսքը:

**Ծիծեռնակ:**

Ծիծեռնակ ծիծեռնակ,  
 Գու զարնան սիրուն թռչնակ,  
 Դեպի որ, ինձ ասա՛,  
 Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, Թո՛ր. ծիծեռնակ,  
 Կնձ տեղս Աշտարակ,  
 Անդ շինի՛ր քո բունը,  
 Հայրենի կտորի՛ տակ:

Գու պատմէ թէ ինչպէս,  
 Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
 Միշտ լալով ողբարով,  
 Կեանքս մաշուել եղել կէս:

Ինձ համար ցերեկը,  
 Մուժ է շրջում արեգը,  
 Գիշերը թաց աքիս  
 Քունը մօտ չէ գալիս:

Անդ հեռու պլեւոր,  
 Հայր ունիմ սգաւոր,  
 Որ միակ իւր որդւոյն  
 Սպասում է օրէ ցօր:

Երբ տեսնես դու նորա՛,  
 Ինձնից շատ բարեւ արձա՛,  
 Ասա՛ Թո՛ղ նստի լայ  
 Իւր անբախտ որդու վերայ:

Ասի՛ր, որ հրացուած,  
 Թառամեցայ միացած,  
 Ես ծաղիկ զեղեցիկ  
 Հայրենի հողից զրկուած:

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
 Հեռացի՛ր Թո՛ր արագ  
 Դէպի Հայոց երկիրը,  
 Կնձ տեղս Աշտարակ:

**Երգ մեռանող հայրենասիրի:**

Ազնի՛ւ ընկեր, մեռանումեմ,  
 Բայց հանգիստ եմ եւ հոգւով,  
 Իմ թշնամիքս ես օրհնում եմ,  
 Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անդի՛ն ընկեր,  
 Զգնահատած ոչ ոքից,  
 Բայց հաւատտեաւ անձնանուէր  
 Աղդիս մշակ կհաշուիմ:

Ազնի՛ւ ընկեր, ջմոռանա՛ս,  
 Անդաւաճան ջերմ սիրով,  
 Ես սիրել եմ իմ հայրենիք,  
 Գնա՛ և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգի  
Կարեկցաբար մտածի՛ր,  
Ոսկէ գրքոյն Եղիշէի,  
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր:

Այնտեղ սուրբ կրօն ազգ միաբան

Ազատ կամքով ու խիղճով,

Այնտեղ վարդան, անմահ վարդան,

Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք սեղան սրբութեան,

Ես Աստուծոյ առաջև

Շատ կաղաչեմ շատ կարտասուեմ,

Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերի՛մ, մահս մօտ է,

Բայց հանգիստ եմ ես հոգևով,

Որովհետև խիղճս արդար է,

Ճշմարտութեան ջատագով:

Ո՛վ Տէր մեր Աստուած,

Լե՛ր մեզ ողորմած,

Դու ես Լոյս Լուսոյ,

Մեր հոգին զօրացո՛յ յաւիտեան:

Ո՛վ Տէր մեր Աստուած,

Ո՛յժ տուր բաղկացոյ

Վաննիք ոսոխք,

Պահենք կրօն:

Աստուած, մեր հոգին

Զօրացո՛յ յաւիտեան:

} Կրկնէ:

### Չինուորի երգ:

Չինուորիս երգերը, եղբա՛րք, լսեցէ՛ք,

Աշխարհիս բաները լա՛ւ ճանաչեցէք.

Մէկն ունի մեծ աներ, միւսը գիւղ ունի,

Բայց մեր խեղճ Չինուորը ոչինչ բան չունի:

Շօրերը թանկագին, փորը միշտ քաղցած,

Տո՛ւր ձիուդ միշտ գարի ինքդ կե՛ր չոր հաց (2)

Թէ քաջ պատերազմիս կտան մեծ պարգև, (2)

Թէ ոտքդ կորցնես, կասեն մնաս բարև, (2)

Ո՛ւր գնայ Չինուորը աշխարհիս վերայ,

Ահա նորա վաստակ քսան և մէկ տարուայ: (2)

### Որբ մանուկ:

Ա.՝ Երբեք երբեք մե՛ ե „Вечеръ бѣло, сверкали звѣзды“  
Երբեք եղանակով:

Մի երեկոյ աստղ էր փայլում,

Դուրսը ցուրտ էր խիստ սառած,

Փողոցով մի մանուկ էր գնում,

Դողողալով ողջ կապուտած:

Ո՛վ Աստուած, մանուկն ասումէ,

Ստուգեմես, քաղցած եմ ես,

Աստուած իմ, ո՞վ կտաքացնէ,

Կկերակրէ ինձ որբիս.

Մի անց կենող պառաւ կին

Լսեց ծայր խեղճ որբին,

Տարաւ իւր տուն տաքացրեց,

Եւ հաց տուեց ուտելու.

Եւ պարկեցրեց անկողնի մէջ.

Ինչպէս տար է որբն ասաց,

Ծածկեց աչքերը սիրուն ժպտաց,

Եւ բնեց նա հանդիստ բնով:

Աստուած խնամում է Քոչնակին,

Եւ ցօղում է նա ծաղկին,

Անապատան որբ մանուկին

Չի Քողնիլ նոյնպէս Աստուած:

Դասադիրք Մայր. լեզ. և. Բ. Միրզաբէգեանց.

**Աղքատ կին:**

Յուրաքանչէր փշեց ձմեռ սաստիկ,  
 Չիւնը ծածկեց դետինը,  
 Ամենայն մարդ մտաւ իւր տուն  
 Պարտսպարուիլ ցրտիցը.  
 Ժամի դռնում գողգողալով  
 Կանգնած է մի աղքատ կին,  
 Նորա հանդերձը պատառ պատառ.  
 Չունի շապիկ իւր հագին,  
 Անհամարձակ նա իւր ձեռքը  
 Պարզում է անցկացողին—  
 »Ողորմութիւն արէք, Պարոն,  
 Անտուն անտէր աղքատին:«

Չեզ, սիրելիք, ասեմ ո՞վ էր  
 Այս խղճալի աղքատը,  
 Այն ցրտումը ոտաբոբիկ  
 Կանգնած ժամի դռնումը,  
 Շատ ժամանակ դեռ չի անցել,  
 Երբ նա փառքով ու պատուով  
 Ման էր դալիս փողոցներում  
 Իւր սեպհական կառքերով,  
 Այժմ վախով նա իւր ձեռքը  
 Պարզում է անց կացողին—  
 »Ողորմութիւն արէք, պարոն,  
 Անտուն անտէր աղքատին:«

Ժամի դռնում նա կանգնած է,  
 Աչքերը կոր վեղը ճուկ.  
 Նորա նախկին բարեկամքը  
 Չեն ասում նորան, »խղճուկ,  
 Ե՛կ դու մեր մօտ, մեք կամօքենք  
 Քո վիճակի դառնութիւն.  
 Կթուլացնենք ճակատագրիդ  
 Խիստ հարուածի սաստկութիւն:«  
 Նա տանում է տառապելով  
 Այս սոսկալի վշտերին—  
 »Ողորմութիւն արէք, պարոն,  
 Անտուն, անտէր աղքատին:«

**Տէ՛ր ողորմեա՛.**

Ե՛կ Տէ՛ր Յիսուս, ողորմեա՛ մեզ,  
 Ողորմութեան ժամ է արդէն:  
 Ե՛կ բարեխնամ, ա՛յց արա մեզ,  
 Այցելութեան ժամ է արդէն: Տէ՛ր ողորմ.  
 Ե՛կ մարդասէ՛ր, փրկեա՛ դմեզ.  
 Փրկելից շնորհաց ժամ է արդէն:  
 Ե՛կ, բաղմազութ, ինայեա՛ ՚ի մեզ,  
 Խնամող սիրոյդ ժամ է արդէն: Տէ՛ր ողորմ.



### Գերի Յոյն:

Հայրենիք սրբազան, իմ սիրո՛ւն աշխարհ,  
Թռչումեմ զէպի քեզ հոգւովս անդադար.  
Բայց աւա՛ղ, այս բանտում փակված եմ անտես,  
Պատերազմի դաշտում չեմ կուլում և ես:

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,  
Սրտումն շղթաների ձայներ կրելով,  
Զեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,  
Ա՛խ, կամ ոչնչանալ կամ լինիլ ազատ:

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կուլիլ,  
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանիլ,  
Բայց աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,  
Պատերազմի դաշտում չեմ կուլում և ես:

Զգիտեմ ինչպէս է կուլին հրդէհվում,  
Ես չունիմ ոչ ինչ լուր, բայց լուրն է թռչում,  
Տարվում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,  
Թափվում է ազգ արիւն բայց ես չեմ այնտեղ:

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,  
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է,  
Թո՛ղ այստեղ չարչարուիմ անծանօթ կապուած,  
Միայն քեզ, Հայրենիք, անեսեմ ազատուած:

### Իտալացի աղջկայ երգ:

Մեր հայրենիք թշուառ, անտէր,  
Մեր թշնամուց ոտնակոխ,  
Իւր որդիքը արգ կանչում է,  
Հանել իւր վրէժ քէն ու դիս:

Մեր հայրենիք շղթաներով  
Այսբան տարի կապկապած,  
Իւր քաջ որդուց սուրբ արիւնով  
Պիտի վնի ազատված:

Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ  
"Պտասուքով լուացի:

Եայի՛ք նորան երեք դունով  
Նուիրական մեր նշան,  
Թող փողփողի թշնամու դէմ,  
Թող կործանուի Աւստրիան:

Ինչքան կին մարդ մի թոյլ էակ  
Պատերազմի գործերում,  
Կարէ օգնել իւր եղբօրը,  
Զանց չարեցի քո սիրուն:

Ահա իմ գործ, անա դրօշ,  
Շուտ մի՛ հեծիր քաջի պէս.  
Գնա փրկել մեր հայրենիք,  
Պատերազմի վառ հանդէս:

Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտի մեռնի,  
Բայց երանի՛, որ իւր ազգի  
Սղատումեան կհոնվի:

Գնա եղբայր, Աստուած քեզ յոյս,  
Ազգի սէրը քաջալեր,  
Գնա թէ եւ չեմ կարող գալ  
Բայց իմ հողին քեզ ընկեր:

Գնա մեռի՛ր քաջի պէս,  
Թո՛ղ չտեսնէ թշնամին  
Քո թիկունքը, թող նա չստէ  
Թէ վատ է Իտալացին:

### Երկու քոյր:

Մեզնից շատ առաջ կար մի թաղաւոր,  
Հոգւով դեռ արի գլխով ալևոր,  
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,  
Ոսկի ասացին զխառնք այն դարը:



Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,  
 Մինը խիստ տղեղ միւսը դեղեցիկ.  
 Մի օր ազեղը ասաց միւսին,  
 «Երթանք ծովի ակի, քուրիկ միսսին»:

Միրունը գնաց առաջից տրտում.  
 Տղեղը եանից ռիս պահած սրտում.  
 Հաղիւ թէ ծովի ակին էր հասած,  
 Իր սիրուն բրջ գլորեց նա ցած:

Կանչեց կեսամեռ սիրուն ջրից,  
 «Քուրիկ, իմ քուրիկ» փրկի՛ր ինձ մահից.  
 Ես ունիմ տանը դեղեցիկ մանեակ.  
 Ա՛ն էն քե՛զ լինի՛ պարզեկի՛ր ինձ կեանք»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:

— Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,  
 Կտամ քեզ ոսկի պսակ պատուական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:

— Քուրիկ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,  
 Քեզ սիրուն փեսաս կտամ անտրտունջ:

Տղեղի սիրտը դարձել էր ժեռ քար,  
 Քրոջ խնդիրքը թողեց անկատար.  
 Չկտորսր ծովը ձգեց մեծ ուռկան,  
 Բռնեց մարմինը սիրուն աղջկան:

Չրիցը հանեց զրեց ակի մօտ,  
 Շատ ծաղիկ ցանեց վրէն ու շատ խոտ,  
 Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,  
 Լացեց ու առաւ զրեց ուսի վրան:

Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,  
 Չորացրուց նորա մարմնու գիփ հիւթը,  
 Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրից  
 Բաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,  
 Գնաց արքունիք տաւիղը ձեռքին.  
 Երբ մտաւ դա՛լիճ շքեղ զարդարած,  
 Տեսաւ ազեղին փեսի մօտ կանգնած:

Բաղեց բերանը լարերին խփեց,  
 Հիւրերի ասաց քաղցրաձայն երգեց,  
 «Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,  
 Հարազատ քոյրս խեց իմ պսակ»:

Լսէ՛ իմ ծնող, լսէ՛ սիրական,  
 Հարազատ քոյրս խեց իմ փեսան,  
 Լսէ՛ ժողովուրդ, լսէ՛ անխռով,  
 Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով:

Միւս օր դահիճք խարոյի շինեցին,  
 Մահապարտ քրոջ մէջը գլորեցին.  
 Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց—  
 «Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

**Մայր և որդիք:**

„Тыто ты мама, безпрестанно“ երբե եղանակով:

Ինչի՞ մայր իմ, դու անզաղար  
Մեր քրոջ անունն ես յիշում,

Կաւ երկրում է մեր էլիզան,

Եւ դու ինքդ ես մեզ ասում:

86 „Ա՛խ ես զիտեմ լաւ երկրում է,

Բայց այնտեղ ո՛չ հովիտ կայ,

Ո՛չ ծաղիկի ո՛չ խոտ հոտաւէտ,

Ո՛չ թիթեռներ դարունքիայ:“

— Մայրի՛կ, մայրի՛կ, նըրումք,

Հրեշտակներն են երգ

Կարմրագգեստ զօրք է ընծասուն,

Աստղերն ուրախ են ձեմում:

— „Բայց ա՛խ, այնտեղ նա մայր չունի,

Որ լուսամուտից նայէր,

Թէ ինչպէս նա ծաղիկի փունջեր

Կանաչ հովտից կքաղէր:“

**Առաւօտեան երգ շինականաց**

Այ մարդ, այսօր շատ քնեցար ննջեցի,

Առաւօտեան հով ժամանակն անցուցի,

Արեգա՛ր ծովն ծայրէն ծագեցաւ,

Չերմութիւնը ձորն ու դաշտը սփռեցաւ,

*Handwritten signature*

*Handwritten signature*

*Handwritten signature*

*Handwritten signature*

